Դ. ՏԱՐԻ ԹԻՒ 1178 — ՇԱԲԱԹ 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1887 — (Ն. Տ.) 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1887 — 2 ԲԷՊԻՒԼ ԱԼԲԸՐ 1305

20 ՓԱՐԱ (ՃՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԴՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂԳԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

Գլխաւոր խմբագիր՝ Գրիգոր Նորատունկեան
Գլխաւոր տնօրէն՝ Գարեգին Զարիֆեան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ (ՃՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	դահեկան արծաթ	160
» »	Վեցամսեայ	» »	80
» »	Եռամսեայ	» »	40
Գաւառաց »	եւ տերության		
	թղթատարով տարեկան	» »	240
Գաւառաց համար եւ տեղական			
	թղթատարով վեցամսեայ	» »	120
Օտար երկիրներ, տարեկան		ֆրանք	56
» »	վեցամսեայ	»	28

Դուրս զրկուած լրագրաց համար գործածուած ծախքը Տնօրէնութեան վրայ է. Խմբագրութեան զրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1887

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻԼԻԿԻՈՅ ԳՈՐԾԵՐ

Կիլիկիոյ գործերն օրուան խնդիր չեն համարուիր, և երբ կան օրուան խնդիրներ, և օրուան հրատապ խնդիրներ, դժուար է ուշադրութիւն հրաւիրել ուրիշ տեսակ խնդիրներու վրայ։ Բայց շատ մը նկատմամբ մասնաւոր կարեւորութիւն մ'ունին Կիլիկիոյ գործերն։ Այն կողմերէն եկած տեղեկութիւնք արժանի են ամէն Հայու մտադրութեան։ Զուտ ամենայն խստութեամբ աւերումներ կը գործէ այնպիսի տեղեր ուր հրդեհ, երաշտութիւն և թշուառութիւն արդէն չարաչար կեղեքած են ժողովուրդը։ Թշուառութիւնն ու մարդասիրութիւնն իրարու դէմ բուռն պայքար մը մղելու վրայ են Ուլնիոյ մթին տխուր հովիտներուն մէջ։ Հրկիզեալներուն ծանուցեալ խեղճութիւնը, ձմրան պատճառաւ ստստկացեալ, և պետական ու ազգային նպաստամատոյց մարմիններու գործունէութիւնն համակիր ուշադրութեամբ դիտուելու արժանի իրողութիւններ են։ Բերկրութեամբ և երախտագիտութեամբ պիտի իմանայ Թուրքիոյ ժողովուրդը թէ մեր բարեգութինքնակալին Կառավարութիւնը բաւական նպաստած է Զէյթունցւոց անմիջական պէտքերուն հայթայթման, և այս պետական նպաստից չարունակման նկատմամբ մեր յոյսը չկորցնելով հանաւերձ, կը փափաքինք որ ազգային մեղուական յանձնաժողովն ևս աւելի տեւական նպաստ մ'ընելու ջանքերուն մէջ պակուի բորը այն յաջողութեամբ որուն կատարեալ իրաւունք ունի մարդասիրական այնպիսի գովելի ձեռնարկ մը։

Միւս կողմէ, Այնթապէ մեզ ուղղեալ նամակներէ ցաւ ի սիրտ կը տեղեկանանք թէ Կիլիկիոյ սովելոց համար Միսիոնարաց ձեռքով բաժնուած դրամը մարդասական նպատակի կը գործածուի եղեր։ Արեւելի Թղթակից մը, Իսկենտերունէ վեց ամիս դէպի հիւսիս Զօգմէրզմէն անուն զուտ հայաբնակ գիւղն այցելով, ստուգեր է որ Խաչէր անուն Մարաշցի Պատուելի մը 24 հոգիներու մէյմէկ մէճիտ կը խոստանայ և անոնցմէ ստորագրութիւն կառնու Կառավարութեան դիմելով Բողոքական արձանագրուելու։ Բարեբախտաբար, իւր այս դիտումի դեղեր հանելու միջոցը կը գտնուի։ Մըսդը Մ'ոնդկոմբի անուն Միսիոնարի մը անունն ևս շատ յիշուեցաւ այս սովելոց նպաստ բաշխելու գործին առթիւ, և նոյն թղթակից, անձամբ ճանչելով զՊ. Մ'ոնդկոմբի, կը գրէ մեզ թէ ամէն բան և մարդասիրական ձեռնարկ մ'իսկ կրօնափոխական նպատակի գործածելու համար յոյժ եռանդուն եւ մինչեւ իսկ մոլեռանդ գործիչ մ'է սա։ Ուրիշ աղբիւրէ իմաց կը տրուի մեզ թէ ուրեք ուրեք խղճալի Հայք ոմանք, Մխսիոնարներէ նպաստ ստանալու առթիւ, բողոքականութեան յարեր են կամ յարելու դիտումով յայտներ են,— իրաց վիճակ մը որ եթէ Միսիոնարաց կողմէ անխիղճ եւ հակաքրիստոնէական ճարպիկութիւն մը կը ցուցնէ, մեր կողմէ ևս ազգային իշխանութեանց կատարեալ անփութութեան նոր ապացոյց մ'է։

Եւ իրաւ, Կիլիկիոյ Հայոց խղճալի կացութեան մէջ, Տ. Մկրտիչ Կաթողիկոս խոյս կուտայ ճշդիւ ա՛յն կեդրոններէ ուր իւր ներկայութեամբ, աղդեցութեամբ և գործունէութեամբ կրնար քիչ շատ դարման տանիլ տիրող թշուառութեան, կամ դէթ սատարել նպաստամատոյց մարմիններուն։ Զէյթունի մէջ չերեւիր, ո՛չ ալ Ատանայի մէջ կամ չրջակայքը։ բայց չի մոռնար Հալէպ վաղել, տարեկան կալուածոց եկամուտը գանձելու։ Չի մոռնարնաև Այնթապի մէջ տարօրինակ կանոններ հաստատել, որոցմէ Եկեղեցին կամ Ազգն ո՛և է օգուտ չի կրնար ակնկալել։ Օրինակի համար, կը լսենք թէ Այնթապի մէջ աշխարհական Աթոռական կարգեր է՝ պրոլ Լ էբաստ հաւաքելու և ի հարկին քահանայից փիլոն առնլու չափ արտօնութեամբ։ Այս հետաքրքրաշարժ կանոնադրութեան վրայ կրօն. ժողովոյ յատուկ ուշադրութիւնը կը հրաւիրենք։ Կը կարծենք թէ աշխարհականացուցման քաղաքականութիւնը Ֆրանսայի մէջ իսկ այդ ծայրայեղութեանց չէ կրցած տարուիլ տակաւին։ Այսպիսի իրողութեանց առջեւ, մեր Կիլիկիոյ Թղթակիցը կը ծանուցանեն թէ տեղացի ժողովուրդը, թէ Կաթողիկոսէն և թէ Կ. Պոլսէ յոյսը կտրած, բացարձակ վհատութեան մատնուած է, և թէ այսպիսի վիճակ մը դժբախտապէս մեծամեծ դիւրութիւններ կրնայ տալ օտար մարդոցներու։

Կիլիկիոյ Կաթողիկոսին արարքը քննադատած ժամանակ, իւր մեկ խոհական տնօրինութիւն ևս կրնանք յիշել։ Ն. Ամենապատուութիւն, այլ և այլ խնդիրներու մէջ կեդրոնական Վարչութեան աջակցութեան պէտք տեսնելով, այս օրերս գրեց ի Պատրիարք բարձ թէ Հոգեւոյս Տ. Ներսէս Պատրիարքի հետ կնքած Պայմանագիրը կը ճանչէ։ Այդ Պայմանագրով Կեդրոնական Վարչութիւնն և Կիլիկիոյ Կաթողիկոսը փոխադարձ պարտաւորութիւններ ստանձնած էին։ Բայց Տ. Մկրտիչ Կաթողիկոս Կիլիկիա վերադառնալուն պէս «Ճնշման ներքև ստորագրեցի» ըսելով ուրացած էր իւր ստորագրութիւն, և Պայմանագրոյ տրամադրութիւններն անգոսնած, որ անկէ ի վեր մեռեալ տառ մնացած էր։ Բայց վերջին ժամանակներս դէպքերը Կաթողիկոսին մտաց մէջ փոփոխում մը յառաջ բերած պէտք է լինին. զի Պայմանագրոյն իւր կողմէ վերստին ճանչցումը լաւ նշան մ'է։ Կրօն. ժողովը բնականապէս պատասխանեց թէ, քանի որ Պայմանագրով յանձն առած պարտաւորութիւնները կը ճանչէ, Տ. Մկրտիչ Կաթողիկոս ժամանակ պէտք չէ կորուսանէ Սահմանադրութեան տրամադրութեանց համեմատ ժողովներ կազմելու և Առաջնորդներ ընտրելու տալու Կիլիկիոյ չատ մը թեմերու մէջ, որք տարիներէ հետէ անխնամ վիճակի մը մէջ կը մնան։ Տ. Մկրտիչ Կաթողիկոս ցարդ Սահմանադրութեան բարեկամ չէր, բայց Սահմանադրութենէն աւելի աղէկ դրութիւն մ'ալ գործադրած չուներ։ Տեսնե՛նք թէ կրօն. ժողովոյ յանուն կեդրոնական Վարչութեան ըրած օրինաւոր ազդարարութիւնն ի՞նչ տպաւորութիւն պիտի ընէ Տ. Մկրտիչ Կաթողիկոսին վրայ, և ի՞նչ արդիւնք պիտի տայ։

Մեր Կիլիկեան վերջին Թղթակցութեանց մէջ բաւական խօսուեցաւ նաև Անկլիքան Եկեղեցին Կիլիկիոյ մէջ հաստատելու սկզբնական փորձերուն վրայ, որք քանի մը տարիներէ ի վեր կը փորձուին ձեռամբ Սէմէրճեան Մկրտիչ նախկին եպիսկոպոսի։ Այնթապէ նոյմ. 5 թըւով մեզ ուղղեալ նամակ մը կը ծանուցանէ թէ տեղւոյն անկլիքան նորակերտ եկեղեցւոյն չէնքն, Անգլիայէն եկած նպաստներու շնորհիւ, այս տարի փութով լառաջ կը տարուի, և աւարտելու մօտ է։ Հայ Անկլիքանք տասն հոգի հազիւ կան, և եկեղեցի մը պիտի ունենան, զոր Սէմէրճեան Վեր. Անկլիքանին շնորհիւ Բէնդրպըրիի Արքեպիսկոպոսը կը յուսայ բոյն մ'ընել Անկլիքանութեան ի Կիլիկիա։ Այն յուսով Անկլիքան Եկեղեցին ամսական մը կը չարունակէ վճարել յիշեալ չեպիսկոպոսին։

Այս իրողութեանց ի տես, անչուշտ հակասական կը թուի Անկլիքան Եկեղեցւոյ վարիչներուն ընթացքը, որք մի կողմէ կը յայտարարեն թէ Հայոց կամ ուրիշ արեւելեան ժողովրդոց մէջ նորահաւատներ կամ կրօնափոխներ յառաջ բերել չեն ուզեր, և միւս կողմէ մարդասիրութեան հնարքներու կը դիմեն որք ամերիկացի Միսիոնարաց հրնարքներէն բանով մը չեն տարբերիր։ Սէմէրճեան Մկրտիչի անձնաւորութիւնն և Հայ Եկեղեցիէն բաժնուելու պարագաներն յանձնարարելի պատուաւոր հանգամանք չունէին արդէն, և այսչափ տարիներէ ի վեր պաշտօնապէս անկլիքան լինելովը հանդերձ, կը տեսնենք թէ այդ մարդ հազիւ մէկ տասնեակ հետեւորդներ կրցած է ունենալ։ Բայց և այնպէս, Անկլիքան եկեղեցւոյ վարիչները կը յուսան ատուաձահաճոյ գործ մը կատարած լինել՝ արեւելեան ժողովրդի մը մէջ կրօնային նոր հերձուած մը յառաջ բերելու դիտմամբ յատուկ չենք մը կառուցանել տալով Այնթապ։

Մինչ Անկլիքան Եկեղեցին Արեւելքի մէջ կռուան մը կը փորձէ ունենալ՝ Այնթապի եկեղեցւոյն չինութեամբ, Ամերիկացի Միսիոնարքը նոյն քաղաքին մէջ իրենց «Կեդրոնական Թուրքիոյ Քոլէճ» անուն միջնակարգ կրթարանը կրօնային ծաւալման ազդու գործիք մը կը չանան ընել։ Տրուած կրթութիւնը բոլորովին բողոքական է։ Բնական է որ Այնթապի հայ երիտասարդութիւնը բաղձալ մրցիլ օտար կրթարանիդ դէմ, և գոհութեամբ կ'իմանանք թէ դաղափար մը կայ կեդրոնական Վարժարան մը բանալու Այնթապի մէջ,—դաղափար որ բաւական մշակուած է թէ յԱյնթապ և թէ Կիլիկիոյ ուրիշ կողմերը։ Վարդանեան կրթարան մը կայ հոն, որ իւր բարոյական ու նիւթական չէնքով արդէն կեդրոնական մը նախագիծը կրնայ հաստատուիլ։ Ամենայն համակրանքով կ'ողջունենք Այնթապի ազգասէր երիտասարդութեան յառաջդիմական այս գովելի դաղափար, և կը մաղթենք որ Կիլիկիոյ ամէն կեդրոններու նիւթական ու բարոյական աջակցութեամբ շուտով իրագործուի այդ ազդօգուտ դիտաւորութիւն։

Այնթապի մէջ Կեդրոնական Վարժարանի մը հաստատման դաղափարը ջատագովելով, ցաւ ի սիրտ հարկադրեալ ենք յիշեցնել թէ ամենեւին նպաստաւոր տեղեկութիւն մը առած չունինք Կիլիկիոյ Կաթողիկոսին Սսոյ վարժարանին վրայ, զոր Ն. Ամենապատուութիւն Էջմիածնի Դէորդեան Ճեմարանին հետ չի փոխեր, և որ, սակայն, կանոնաւոր դպրոցի մը ամէն հանդամանքներէ իսպառ զուրկ կը ներկայացուի մեզ։ Բայց Կիլիկիոյ Կաթողիկոսը պարտաւոր է, և եթէ կամք ընէ՝ կարող ալ է, քիչ շատ օրինաւոր վիճակի մէջ դպրոց մը պահել իւր աթոռին քով։ Եթէ ոչ ուսեալ աշխարհականներ և ձեռնհաս ուսուցիչներ, գէթ քիչ շատ կրթեալ եկեղեցականներ հայցելու համար՝ Կիլիկիոյ Աթոռն անհրաժեշտ պէտք ունի այնպիսի վարժարանի մը, որոյ նմանները ունեցած են Կիլիկիոյ վաղեմի անուանի Կաթողիկոսունք, ի մեծ օգուտ Ազգին և Եկեղեցւոյն։ Տ. Մկրտիչ Կաթողիկոսի սոյն կրթական պարտաւորութիւն բացուելիկ հարկաւորութիւն մ'ունի հիմակ որ Կիլիկիոյ ամէն կողմը բողոքական և հռոմէական Միսիոնարութիւնք առաջնակարգ դպրոցներ բանալն իրենց մարդասէրութեան դրշանոր զէնք ըրած են։

Քանի որ Կիլիկիոյ գործերուն վրայ խօսեցանք, յիշեցնք դէպք մ'ալ, որուն հաւատ չենք ընծայեր եթէ վստահելի աղբիւրէ մը գրուած չլինէր մեզ։ Այնթապի մէջ, բարեկեցիկ ընտանիքէ երիտասարդ մը, որոյ կինն ութ ամսէ հետէ դժուած՝ իւր ծնողաց քով դացած է, այժմ կապրի եղեր ուրիշ կնոջ մը հետ, զոր կը ճանչէ օրինաւոր ամուսին՝ առանց պսակի, Դպրն Անդրանիկ Գարքին հրամանով։ Տեղւոյն քահանայք շատ աշխատեր են անհաճոյ դէպքին առաջքն առնուլ, բայց չեն յաջողեր։ Առաջին կինն յաստ պնդում ցուցեր է՝ մերժելով վերադառնալ ամուսնոյն տունն, և երիտասարդը կարծեցեալ ժողովական ամուսնութիւն մը կնքելու տարօրէն խորհուրդն ունեցեր է։ Ասասիկ խնդիր մը յորում Կիլիկիոյ Կաթողիկոսին ո՛և է տնօրինութիւն ըրած լինելը չիմացանք, և զոր կեդրոնի Կրօն. ժողովն անտարբեր աչօք չի կրնար դիտել անչուշտ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աւստրիոյ Կառավարութիւնը, թէև իւր ռուսական սահմանաց վրայ զօրք թափելով զՌուսիա դրդռելու երեւոյթ ունենալ չուզեր, բայց կարեւոր պատրաստութեամբը կը պատասխանէ ռուսական պատրաստութեանց զորս ծանուցինք։ Կալիչիոյ կարեւորագոյն բերդն է Բրզեմիսլ, զոր երկրին ուրիշ մասանց հետ արագ հաղորդակցութեան վիճակի մէջ դնելու համար, երկաթուղեաց նոր գծեր կը շինուին այս օրերս։ Նոր ամրութիւնք կը կառուցուին նման թերովի ամրութեան, որ ռազմագիտական կարեւոր դիրք մը դարձած է։ Աւստրօ-մաճառ բանակին ձիերն և պաշարները գնուած էին արդէն։ Շնորհիւ այս տնօրինութեանց, ամենակարճ միջոցի մէջ բանակ մը կարող պիտի լինի դրաւել Կալիչիոյ ամէն կարեւոր կէտերն, և Ռուսիոյ դէմ ազդուապէս պաշտպանել զանոնք։

—Նորանոր յայտնութեանց նայելով, Պ. Տերուլէտ և Փարիզի նախկին Հասարակորդներ իրօք պատրաստութիւններ տեսած են եղեր ապստամբութիւն մը յարուցանելու համար, եթէ Պ. Ժիւլ Ֆէրրի Հանրապետութեան Նախագահ ընտրուէր։ Այս դաւադիրք խորհեր են որ եթէ Հասարակորդի իշխանութիւնն հռչակեն քաղաքապետական պալատան մէջ, զինուորք նոյն պալատան ստորերկրեայ ճամբաներէն հոն կրնան մտնել, և Հասարակորդք խեղդել խանձարուրն մէջ իսկ։ Դաւադիրք ուրեմն կը ջանան նախ եւ առաջ տիրանալ այդ ստորերկրեայ ճամբաներու դուռներուն։ Բայց քաղաքապետական պալատան և Լօպօ զօրանոցին միջև գտնուած ստորերկրեայ ճամբուն դուռը պահակի մը հսկողութեան ներքև գտնելով, չեն կրցեր ձեռք ձգել այդ դուռ։ Երկրորդ դուռ մը պահակ չուներ, և դաւադիրք փականքին մէջ բան մը կը մտցնեն, որով բանալին անգործածելի կը դառնայ։ Երրորդ դուռ մը Նաբոլէոնի զօրանոցը կը տանէր, և թէպէտ հոն ալ պահակ մը կար, բայց դաւադիրք ոմանք խօսքի կը բռնեն զնա, և նոյն միջոցին ուրիշ մը կը յաջողի բան մը մտցնել փականքին մէջ և անգործածելի ընել զայն եւս։ Հետեւապէս, եթէ Հասարակորդի իշխանութիւնն հաստատուեր քաղաքապետական պալատան մէջ, և զօրքերն հոն մտնել ուզէին, երեք ստորերկրեայ դուռներէն երկուքն անգործածելի պիտի գտնէին անմիջական չարժման մը համար։ Գոհացուցիչ է սակայն տեսնել թէ գործաւոր կուսակցութիւնը, Պ. Տերուլէտի և համախոհից այս ապստամբական պատրաստութիւնները լսելով, պախարակեց զանոնք՝ գործաւորական դատն այնպիսի անխոհեմ չարժմամբ մը վտանգելուն համար։

—Վիէննայի լրագիրք ոմանք կը ծանուցանեն թէ Ռուսիա ընդուներ է Շուէյտի Թագաւորին երկրորդ որդի Կոթլանտի Դքսին ընտրելութիւնը Պուլկարիոյ Իշխանութեան համար։ Երբ միւս Տերութիւնք ևս հաւանին Կոթլանտի Դքսին ընտրութեան, հաւաքական ձեռնարկ մը պիտի լինի եղեր Տերութեանց կողմէ՝ Ֆերտինանտ Իշխանն հրատարման հարկադրելու համար։ Ռուս լրագրոյ մը խօսքին նայելով, Ֆերտինանտ Իշխան, իրեն դէմ պատրաստուող վտանգն դալով, վերջերս նամակ մը գրեր է առ Լօրտ Սալզպրրի, թախանձագին հայցելով անդլիական կառավարութեան պաշտպանութիւնը։

—Վիէննայի ոստիկանութիւնը գրաւեց լուցկիի մեռաղեալ տուփեր որք ռուս զօրավարներու դաւեշտանկարներով զարդարուած էին։ Այս տուփեր թէեւ Ֆրանսայի մէջ չինուած էին, որ ռուսասէր երկրի մը համբաւն ունի այժմ, բայց Վիէննայի Կառավարութիւնն, որ դիպլոմատիայի ամենափոքր չարժառիթ տալ չուզեր ռուս Կառավարութեան, անոնց ջնջումն հրամայել խոհեմութիւն համարեց։

—Կոբրկի, Լէյպզիկ, Դրէսէտի, Վէյմարի և Բօյայի հինգ Եպիսկոպոսունք համիմաստ շրջաբերական մը հրատարակեցին, որով կը պախարակին ջերմագին համակրանաց զգացումները զորս Աւստրիոյ Սլաւունք կը ցուցնեն Ռուսիոյ համար, ինչպէս և այս Սլաւաց սլաւական ժամադիրը մը գործածելու բաղձանքը։

—Ռայխսդակի դիւանն և անդամներէն շատեր այցեցին Արեւելեան լեղուաց Նորահաստատ Ճեմարանն, որով դերման Կառավարութիւնն օժտեց զՊերլին, բաղաքական և առեւտրական կրկին նպատակաւ։ Ճեմարանիս Տնօրէն Բրոֆէսէօր Զախաու հանդիսաւոր ընդունեց իւր այս այցելուներ և հաստատութիւնը ցոյց տուաւ անոնց։ Ներկայացուց մանաւանդ դասատուներն որք օտար երկիրներէն եկած էին, և յատուկ ուշադրութեան մը առարկայ եղան չինարէնի և արաբերէնի դասատուք, որք իրենց արեւելեան տօնական զգեստներն հագած էին այս առթիւ։ Ռայխսդակի նախագահ Պ. Ֆոն Վէտել յայտնեց թէ դերմանական խորհրդարանին անդամք ո՛րչափ հաճութեամբ կը դիտեն կրօնական այս նոր հաստատութիւն, որ կոչուած է արեւելեան երկրաց մէջ նոր թռիչ մը տալ դերմանական վաճառականութեան և արհեստագործութեան, ինչպէս և դերմանական բաղաքականութեան։

—Ռուսական Նորլրագիրը կը գրէ Ռուսիոյ զինուորական պատրաստութեանց լուրերուն վրայ։

«Տեղի չկայ արուեստակեալ քան իրական յուզման զոր դերմանական և աւստրիական լրագիրք կը ցուցնեն Ռուսիոյ կարծեցեալ սպառազինութեանց լուրերուն վրայ։ Ծանուցեալ զինուորական չարժումնք տեղային պէտքերու արդիւնք են պարզապէս, քանի որ ինչ ինչ դիրքեր պաշտպանական վիճակի մէջ դնել և անոնց հարկաւոր պաշարներն ապահովել կը փափաքուի։ Բայց կրնա՞ մեթէ ենթադրուիլ թէ այժմեան հզոր բանակաց մարդ ու գեղանի կնոջ քով, ամուսինը զոր կը սիրէ եւ զոր ընտրած է։

Լթ

Դժբաղդաբար հարի եղաւ իրարմէ բաժնուիլ այն պահուն ուր ճգանցս նպատակին կը մերձենայ։ Հասած էր այն ժամանակն ուր ամեն տարի կ'երթայի ի Նանդ, ամիս մը անցուելու հօրս մօտ։ Կոմսուհին իւր կողմէ կ'սպասուէր ի Պարիզ։ Զեմ գիտեր ինչ պատճառներ յառաջ բերու համոզելու համար զիս թէ անհրաժեշտ էր որ երթար գըտնէր իւր բարեկամուհիներն այդ զբօսանաց վայրին մէջ զոր յայտնի տարաւոր եղանակաւ մը միայն կը ճանչէին։ Իրողութիւնն այն է որ ընդդիմութիւն չբրի։ Տիկին տը Շալի քանի մը ամիսէ ի վեր բազմաթիւ նամակներ ստացած էր որք կը խօսէին այդ իշխանական բնակութեան մշտնորոդ հաճոյից վրայ։ Կը յիշտակէին հանդիսաւորուն անուանքն, տպաւեալ անձինքը։ Կը խօսէին անդ պատրաստուող հանդէսներուն, առաջին անգամ հագնուելիք զգեստից վրայ։ Ա՛լ տէր չէր իւր անձին։ Առանց բան մ'ընելու ինձ, գրեց ի Բարիզ իւր բոլոր հայթայթիչներուն, առ Վորթ, ջրաղացներու յանձնարարելու համար։ տա ժորտան, իւր կօշիկարն—արուեստագէ՛տ մը, կ'ըսէր—կօշիկներ ապատրելու համար։ առ Բրդլիզ, ակնոցագործն, ետ ուզելու համար գոհարները զորս մեկնած տանն յանձնած էր նոնա։ առ Ֆելիքս, խնդրելու համար որ իրեն զրկէ այն հիւսքանչ գլխարկներէ մը քանին, շղարշի եւ թեղանի հիսուածքներ, որք, գործաւորուհեաց ձեռքէն, կ'երթան գետեղուիլ Ներոպիոյ ամենէն գեղեցիկ եւ ամենէն ազնուական գլուխներուն վրայ։ Կոմսուհին կը գրէր դարձեալ որ Պարիզի մէջ իրեն զորեկեն ժանեակներ, Սաքսոնիոյ ձեռնոցներ, հոտաւէտ նիւթեր։ Այս ամենայն մտահոգութիւն կը պատճառէր ինձ։ Ի զուր կ'ըսէր թէ «ալ ապրի կինը չէր», և եթէ Պարիզ կ'երթար, պատճառն այն էր որ պարտական էր առ ընկերութիւնն, թէ մինչ պիտի գրեր ինձ, եւ թէ հոկտեմբերի կիսուն վերադարձ պիտի դանէինք զիրար ի Բարիզ։ տեսնելով իւր սենեկապանուհիներն որք դիշերուան կէսը կ'անցուցնէին պատրաստելու այնքան արդուզարդեր, կոմսուհւոյն այնքան նամակներ գրելն, և իւր զաւակաց և չքաւորաց երեսի վրայ թոզուիլը, կասկածը կը ճմլէր սիրտս։ Վերջին երեկոյն, գիտցի թէ ութին որ Շալի ան-երկիները կը խուսափէին աչերէս, և յետոյ գաղտագողի վրան կը յաբէին տարօրինակ արտայայտութեամբ մը։ Չկրցայ հակիռալ թէ բաժանման վ.ՀՀն էր որ իրեն կուտար այդ նուազկոտ երեւոյթը։ Կը հառաչէր։ Ես ալ սկսայ իրեն նայիլ։ Զեմ գիտեր թէ ի՞նչ տեսնալ կարծեց նայուածքիս մէջ։ Գլուխն անգին դարձուց։ Իւր գրկաց սեղմումէն խլելով ինքզինքս, չկրցայ զսպել արցունքներս։ Շատ բուռն, չատ սուրբ հանդամներ վայելած էի, եւ կը վախնայի որ նա՝, որ ինձ ճաշակել տուած էր զայնս, չխուսափի՞ ձեռքէս։

Խ

Նանդ հասած ատենս, հօրս դէմքին վրայ գտայ խորհրդաւոր արտայայտութիւն մը որ սովորական չէր իրեն։ Բոլ թէ արժանապատիւ մարդը խանդաղատանքը կը սիրէր զիս։ Պիտի յարեմ այժմ թէ իւր բոլոր բաղձանքներն իմ վրաս կեդրոնացուցած էր։ Իւր վարած դժնեայ կեանքն երբէք չէր ներդործած իւր նկարագրին վրայ։ Երբէք ճանչցած չեմ իրեն տարեկից մարդ մը որ այնքան անկեղծապէս ազատական լինի։ Ի սրտանց կը ցանկար որ փայլուն ասպարէզ մ'ունենամ, այլ այնքան փափուկ և բարձր կերպով կ'ըմբռնէր մարդկային արժանապատուութիւնն և պատասխանատուութիւնն, որ լաւագոյն կը համարէր մեռնիլ քան բռնահարել ամենադոյն գործս։ Մանկութենէս ի վեր առաջին անգամ լինելով, ինքզինքս անհանգիստ զգացի իւր առջև։ Գիտէի թէ կոմսուհւոյն համար ունեցած հրայրքս կրնայ ամեն պատահարներու ենթարկել զիս։ Այս հրայրքը կը խանգարէր այն ծրագիրներ զորս հայրս կազմած էր ապագայիս համար։ Գաղտնիքս չյայտնեցի նմա։ Չէի ուզեր տխրեցնել զինքն։

Առաջին անգամ ի՞նք, առանց գիտնալու, ամենածանր հարուածը տուաւ ինձ։ Ըսաւ թէ քանի մը ամիսէ ի վեր կ'զգար իւր ուժերուն տկարանալն, եւ թէ լրջմտութեամբ պատրաստուելու էր «անդենական մեծ ուղեւորութեան» համար։ Մինչ բոլորովին յուզեալ էի ի լուր այս տխուր գուշակութեանց, ժպտելով յարեց թէ իւր ընելիք պատրաստութիւնքն էին միայն պատուաւորապէս ամուսնացնել զիս։ Կարողութիւն չունեցայ պատասխանելու։ Ցայնժամ յայտնեց ինձ, միշտ ժպտելով, թէ գեղանի, քաղցրահամբոյր, բարեբարոյ եւ համեստ ընկերուհի մը գտած էր ինձ։ եւ մինչ իւր ներբողեանը կ'ուսուցանէր, զանգակն հնչեց, դուռը բացուեցաւ եւ երկու կանայք ներս մտան։ Դիւրաւ ճանչցայ թէ երկրորդն աւելի մանկամարդն այն ընկերուհին էր որուն վրայ խօսած էր հայրս։

Վեց ամիս առաջ, ի տես նորին, ուրախութենէս հօրս վզին պիտի փարէի։ Տիկին տը Շալիէն աւելի գեղեցիկ չէր, այլ ո՞րքան տարբերութիւն կոմսուհւոյն բաղատմամբ։ Պարզ արդուզարդ մը, համեստ եւ ամենեւին երեւոյթ մը, սիրահաճոյր եւ կուսական բան մը նկարուած իւր դիմագծերուն վրայ, իւր աչերուն մէջ, իւր բոլոր մարմնոյն վրայ եւ ամենադոյն չարժմանց մէջ։ Ո՜հ, յայտնի՞ մ'հասկցայ, և սրտակտուր եղանակաւ, թէ ազնուութիւնն յառաջ կուգայ ո՛չ այնքան տոհմի որքան հոգւոյ սրբութենէ։ Այդ մանկամարդ աղջիկը, զուտակ անշնան ընտանեաց, որ խաղաղարէն մեծցած էր գաւառական քաղաքի մը մէջ, ունէր այն դէմքը զոր թագուհիները պարտին ունենալ։ Ի տես նորին սա բանաստեղծական հանրածանօթ խօսքերը կուգային չրթանցդ վրայ։ «Ողջո՛յն քեզ, Մարիամ, լի շնորհօք։» Մարիամ կը կոչուէր, եւ իւր պաշտպան Աստուածածնէն պէս, իւր տեսքը կը վերացնէր հոգին։

Նոյնհետայն ըմբռնեցի թէ պատուաւոր երիտասարդութիւնն հոն էր, իմ առջեւ, ջջամ վերի կերպով, իւր պայծառութեամբն իսկ յանկուցիչ։ Այդ երջանկութիւն հրմատնօք ու համեստօրէն կը ներկայանար ինձ։ Մանկամարդ աղջկան լռութիւնը պերճախօս էր։ Զիս տեսած ատեն թեթեւ իմն չատագնած էր։ Անտարակոյս ըսած էին, ինչպէս պէտք էր ըսել թէ կրնայի իւր ամուսինը լինելը։ Այս բան չտիպ կացութեան մը մէջ կը թողուր զինքն։ Այլ ևս, պակ մը նուազեալ այս երկնային երեւոյթէն, յանկարծ զգացի որ սիրտս կը գրաւուէր կոմսուհւոյն յիշատակով։ Նման այն տարաբաղդից որք, ծայրայեղութենէ ի ծայրայեղութիւն, ալ ատոմէթիով միայն կրնան յաղթեալ իրենց պատպակը, գլուխս դարձուցի վճիտ ազատութիւն որ ինձ կը մատուցուէր։ Շատ ջինջ էր ինձ համար։

ԽԱ.

Սակայն չէի համարձակեր բացորոշ մերժումի մը տխրութեան փոխարէն հօրս խնդութիւնն։ Բոլ թէ իւր առողջութեան համար յայտնած երկիւղներն անհիմն կը թուէին ինձ, եւ թէ, թէեւ կարող չէի բան մ'ըսել ինձ առաջարկուած ծաղկատ աղջկան դէմ, զոր ամեն կերպով կատարեալ կը գտնէի, գոհ պիտի լինէի եթէ թոյլ տար ինձ քանի մը ամիս խորհրդածել, ըստ որում ամուսնութիւնը լուրջ բան մ'էր։

Հայրս խաբուեցա՞ւ կիսդատուութենէս։ Զեմ գիտեր։ Ամսէ մը աւելի, այնպէս ըրաւ որ ամեն օր հանդիպիմ Մարիի։ Միշտ միւսնոյնը կը գտնէի զինքն, միշտ մեծ պատիւ բերելով իւր տեռին։ Իւր ոչ մէկ վարմունքը ցոյց կուտար թէ տարաւորութիւն մը զործած էի իւր վրայ։

(Շարունակելի)

—)(16)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՌՆԷՍԴ ՖԷՏՕ

ՇԱԼԻ ԿՈՄՍՈՒՀԻՆ

Ուստի սիրով կ'ընդունայի իրեն՝ քաջալերելու համար զինքն։ Ենոյհակալ կը լինէր զԹարը դիտաւորութեան համար։ Քանի՞ կը մտածեմ ժամանակի այս կարճ տեւողութեան վրայ ուր օրէ օր կը կերպարանափոխուէր, այնքան իրաւունք կ'ունենամ հաստատելու թէ, հակառակ իւր անցելոյն, եթէ միշտ իմ բովս ապրած ըլլար, աշխարհային պենցաղէ հեռու, պիտի յաջողէի կանանց լուսազգոն եւ ամենէն հանճարեղն ընել զնա։ Օր չէր անցներ որ նոր սիրապատար բարեմասնութիւններ երեւան չհանէի իւր վրայ։ Իւր գեղեցկութիւնը կ'այլափոխէր։ Աւելի վեհ, աւելի վճիտ կը լինէր։ Միանգամայն ի բաց կը թողուր իւր խրախճանութիւնը զոր միշտ կսիրեցի դատ էի։ Ընդերցումներն որոց կը բռնադատուէի զինքն, խրատուցս չամի կը նպատուէին իւր հոգին զերծանելու աղճատանքէն որոյ մէջ ապրած էր ցայն վայր։ Կը ջանայի թէ կրթել զնա եւ թէ՝ զբօսցնել։ Վերջապէս ամեն կերպով էի այն ինչ որ պարտի լինիլ միշտ, իւր մանկամարդ աղջիկ մը։

Ամսոյս 5 Դեկտեմբեր

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Գրիգոր Աշտարակեցի

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ս. Էջմիածնի Գրասենեակ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ս. Էջմիածնի Գրասենեակ

հանդէպ և ձմրան սկիզբը Ռուսիա լըբջաբար կը խորհի Աւստրիոյ դէմ պատերազմ հրատարակել այն 120,000 զօրով որոց Վարշաւիոյ շրջէ համախմբու�մն օրուան ինդիր դարձած է, և պարսաւելով կը յիշուի Պերլինի և Վիէննայի լրագրաց մէջ։ Այլ այս լրագիրը չպիտի յաջողին համոզել հասարակութիւնը թէ Ռուսիա դադրած է խաղաղութիւն ուզելէ և պատերազմ կը մտաբերէ։»

—Բեդերսպուրկէ եկած վերջին լուրեր ևս Ռուսիոյ խաղաղասէր տրամադրութիւնները կը հաստատեն։

Մանաւորապէս կը ծանուցուի Բեդերսպուրկէ թէ Զարին Դանիայէն և Գերմանիայէն վերադարձէն ի վեր նոր հրաման մը չէ տրուած զօրք ղրկելու դէպ յԱւստրիոյ սահմանագլուխները։ Տրուած հրամաններն առաջուց հաղորդուած են եղեր։ Բայց եթէ իրօք այսպէս է, զարմանալի է որ տակաւին անցեալ շաբթու մէջ կարեւոր զօրախումբ մը կը ղրկուէր Վարշաւիոյ սահմանագլուխները։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրօնական ժողովին երէկ ի նիստ գումարեցաւ ընդ առենապետութեամբ Դիմաքսեան Դեր. Հայրակ եպիսկոպոսի և զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով։

Ժողովը նախ լսեց եկեղեցական պատգամաւորութիւնն որ այս չորեքշաբթի օր ներկայացած էր Բաղէր. Մեծ-Եպարքոսին և գոհութեամբ սրբոտի տեղեկացաւ թէ Ն. Բարձրութիւն յուսալից խոստումներ ըրած է։

Ժողովը նկատողութեան առաւ ըզմիւռնիոյ Ս. Առաքելոյ՝ իւր հրաժարականին համար ղրկած հեռագիրն և որոշեց խնդիրը խառն ժողովոյ ներկայել։

Ժողովը նկատելով որ անցեալները ձուլիչ Տիգրանի խնդրոյն առթիւ թուէթի մէջ Պէնոյ՝ ստորագրուած էր որ խնդիրը բոլորովին խեղաթիւրած եւ մտքերը պղտորած էր, և թէ նոյն լրագիրը չէր հրատարակած Պատրիարքարանի պատասխանն՝ ըստ որում Տպագրական Տեսչութիւնն արգիլած էր գրել այդ խնդրոյն վրայ, որոշեց նոյն խնդրոյ մանրամասնութիւնները պարունակող տեղեկագիր մը պատրաստել և ներկայել Բարձր. Մեծ-Եպարքոսին։

Քէօթահիոյ ազգայինը յայտարարած լինելով որ առաջնորդ չդանուելուն համար ազգային գործերն երեսի վրայ մնացած են, ժողովը որոշեց գրել Թօլտամեան Դեր. Պողոս վարդապետին որ արդէն տեղւոյն առաջնորդական տեղապահ կարգուած է, որպէս զի փութայ իւր պաշտօնատեղին երթալ։

Նախարարաց Խորհուրդն իւր չորեքշաբթի աւուր նստին մէջ որոշած է Պետական Խորհրդոյ յանձնել Պատրիարքական ծանուցեալ խնդրոյն կարգադրութիւնը։

Զմիւռնիայէն երէկ ի Պատրիարքարան հասած հեռագիր մը, որ բանէ աւելի պատուաւոր ազգայնոց կողմէ ստորագրուած է, կը խնդրէ ընդունիլ տեղւոյն Առաջնորդ Դեր. Մելքիսեդեկ եպիսկոպոսի հրաժարականն և տեղապահ կարգել խոհական եկեղեցական մը։

Թէոդոսիոյ Թաղական Խորհուրդը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ Ս. Նիկողայոսի տօնին առթիւ Դեր. Արիստակէս եպիսկոպոս Դերձակեան հանդիսաւոր Պատարագ պիտի մատուցանէ վանն առաւօտ գիւղին եկեղեցւոյն մէջ որոյ տօնախմբութիւնն է։

Եէնի-գաբուի Թաղ. Խորհուրդն ևս կը ծանուցանէ թէ ըստ խնդրանաց Թաղեցւոց՝ Արմաչու վանուց միաբան Գալաբաճեան Արժ. Եղնիկ վարդապետ պիտի պատարագէ վաղն առաւօտ Ս. Առաքելոց եկեղեցւոյն մէջ։

Վերջին պահուն ընդարձակ թղթակցութիւններ ստացանք Իզմիրի վերջին դէպքերու վրայ, զորս պիտի հրատարակենք յառաջիկայ երկուշաբթի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՈՐ ԵՐԿ ՄԸ

Դաշնակահար Սուրէնեան Ստեփան էֆէնտի երաժշտական նոր կտոր մը ձայնագրած է «Tout à la joie», այ խոյժ ու զուարթ եղանակաւ դատրիլ մը՝ դաշնակի համար։

Սուրէնեան էֆէնտիի այս նոր հեղինակութիւնը՝ ձօնեալ առ Վսեմ. Լէոն Պէյ Փափազեան՝ գնահատուած է արդէն ամէն երաժշտասիրաց կողմէ և կը խոստանայ ներկայ ձմրան եղանակին մէջ պարասիրաց նախընտիր դատրիլն լինել։

Վաճառման կէտերնատեղին է Պ. Լիւիճի Պէյլօլիի վաճառատունը, Բերա, Մեծ փողոց, թիւ 311։

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՄԱՍԻՍի այս աւուր թիւը կը պարունակէ.

Ազգային Տեսութիւն. Հայ եկեղեցականութիւն։ Առակ. Ագռաւ եւ ձագք. (ՎԱՀԱՆ Վ. ՊԱՐՏԻԶԱԿԵՆ)։

Զինուորագրութիւն ի Կովկաս. (ՍՐԱԶԵԱՑ)։

Տեղական արհեստագործութիւն. (ՅԱԿՈԲ Պ. ԿԵՎՐԿԵԱՆ ՄԻՆԱՍ Յ. Ֆ.)։

Պարզային բարառ. եւ լեզուք. Նախակրթ բան. (Խ. ՈՒՂՈՒՐԿԵԱՆ)։

Անժէլ. Գէյօն. (Վերջ)։ (Թարգմ. Պ. ԹԷԼԼԱԼ)։

Քաղուած Շաբաթական Լրոց. Արտաքին, Ներքին, Ազգային։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԷԿԻ ՍԷԼՄԱՐԸԲԸ

Սէլմարքի արարողութիւնը սովորական չքով կատարուեցաւ երէկ Համիտիէ մզկիթին մէջ։ Յաւարտ արարողութեան, զօրահանդէս մը տեղի ունեցաւ։ Վեհ. Սուլթանի մանաւոր արկղ պաշտօնատան մէջ կը գտնուէին Պ. և Տիկին Վանտէրպիլդ, ամերիկեան, իտալական, պելճիական և սպանիական դեսպանք ու դեսպանուհիք, Հայ-Հռոմէականաց Պատրիարք Աղարեան Դերապետեան, Դարատաղի գործակատարն եւ այլ օտարազգիք։ Սենեկապետ Բաղրպ պէյ այդ պաշտօնատունն երթալով յանուն Վեհ. Սուլթանի մեծարեց բարձրատիճան այցելուներն և Ն. Վեհափառութեան կայս. բարեւներն հաղորդեց անոնց։

Սէլմարքի արարողութենէն յետոյ ամերիկեան դեսպանն ու Պ. Վանտերպիլդ Վեհ. Սուլթանի ներկայանալու պատիւն ունեցան։ Պ. Վանտերպիլդ իւր հրաժեշտի ողջոյնը մատոյց Ն. Վեհափառութեան որ սիրալիր կերպիւ ընդունելով մեծահարուստ ամերիկացին՝ բարձր աստիճանի պատուանշան մը շնորհեց նմա։

—Պ. Վանտերպիլդ այսօր միջօրէին մեկնեցաւ Կ. Պոլսէն յԵգիպտոս։

ՏԷՐՈՒԹԵԱՆ ԵԼԵՄՈՍԻՆԸ

Թուէթ իւր այս աւուր թուով յօդուած մը հրատարակելով կայս. կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ տերութեան հասութիւնից դանձման վրայ և կառաջարկէ ի գործ դնել այն նոր միջոցներն որոց պէտք տեսած էր Ելմտացոյցի յանձնաժողովն։ Թուէթ ի մէջ այլոց կըսէ թէ Տէրութիւնն, անցեալ 300 տարիէն մինչեւ ներկայ 303 տարւոյ կէսը 4-5 միլիոն ոսկւոյ չափ կարեւոր գումար մը կը պահանջէ անհատներէ։

ՐՈՒՄԷԼԻԱԿԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՆՔ

Կանխաւս էր, կըսէ Սուռսպուլ, այն զրոյց թէ Թուրքա-Ռումելիական սահմանագլխոյն վրայ Պուլկարաց կողմէ հաստատեալ մաքսային շղթան ընդունուած է Բ. Դրան կողմէ։ Եթէ կայս. կառավարութիւնը մինչեւ ցարդ փոխադարձաբար վարուած չէր, քաղաքական նկատմանց պատճառաւ էր. սակայն ըստ որում այն մաքսատուրքը զոր պուլկար կառավարութիւնը կառնու Թուրքիայէն ղրկուած ապրանքներէն, մեծ վնաս կը պատճառէ օսմանեան վաճառականութեան շահուց, Բ. Դուռն որոշած է իւր կարգին միջոցներ ձեռք առնուլ պուլկարական վաճառականութեան դէմ։

Նախարարաց խորհրդոյ վերջին նիստերէ մէջն մէջ որոշուած է յոյժ բարձր մաքսատուրք մը սահմանել Պուլկարիայէն եկած ամէն ապրանաց համար։ Այս որոշում մեր մեր նոյն օրը մատուցուած է ի կայս. պալատ և վաւերացած Վեհ. Սուլթանին կողմէ։

Հետեւաբար պէտք եղած հրամանները տրուած են մաքսային վերատեսչութեան որպէս զի մաքսային շղթայներ հաստատի Պուլկարիոյ եւ Արեւ. Ռումէլիի բոլոր սահմանագլխոյ վրայ և այդ երկու երկիրներէն եկող ապրանաց համար մաքսատուրք մը հաստատէ։ Ըստ որոշման Նախարարաց Խորհրդոյ, այս որոշում պիտի գործադրուի ցկատարեալ լուծում խնդրոյն։

ՆԱԽՈՐԴ ԽՏԻՎՆ

Կըսուի թէ Նախորդ Խտիվ Իսմայիլ փաշա արտօնութիւն ստացեր է իւր բնակութիւնը Կ. Պոլիս հաստատել ընտանեօք։ Այս արտօնութիւնը ծանուցուած է Ն. Բարձրութեան որդւոյն՝ Հասան փաշայի որ մայրաքաղաքս կը գտնուի։

Իսմայիլ փաշա Եմիրկէնի ծովեզերեայ ապարանքը պիտի գայ բնակիլ։

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԻՇԽԱՆԻՆ ՄԱՑՐԸ

Սոֆիայէն կը գրեն թէ Բլէմանդին Իշխանուհին Կ. Պոլիս պիտի գայ ի մօտոյ։ Ֆէրտինանտ Իշխանի մայրը մտադիր է, կըսէ Մեմորէալ Տիպլոմատիք, խնդրել Վեհ. Սուլթանէն, որ իրը Վեհապետ՝ հաճի ուշադրութիւն դարձնել Պուլկարիոյ քաղաքական կացութեան վրայ ուր դատադրութիւնք և մեքենայութիւնք միմեանց կը յաջորդեն անընդհատ։ Այս այցելութիւն եթէ տեղի ունենայ, Լոնտոնի դիւանագիտական ակմբոց մէջ չը կարծուիր եղեր որ յաջողութիւն գտնէ։ Բրիտանական դահլիճն որուն մեծ ձեռնարկներ ըրած է Ֆէրտինանտ իշխանը, տրամադիր չերեւիր միջամտել պուլկարական գործոց։ Այսու հանդերձ Լորտ Սալիսբրի խոստացած է իւր բարոյական աջակցութիւնը նուիրել երիտասարդ իշխանին։

—Քլէմանդին իշխանուհին Պուլկարիոյ մայրաքաղաքին մէջ եռանդագին ցոյցերով կողջունուի ամենուրեք եւ իւր քաղցրահամբոյր բնաւորութեամբ ընդհանուր համակրանք շահած է։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Բ. Դրան և Պառոն տր Հիրշի բանակցութիւնք օրք պահ մը դադրած էին, վերսկսած են և կը յուսացուի թէ, կըսէ Լ. Հերալտ, երկուց կողմանց համար գոհացուցիչ արդեան մը կը յանգին։

Արեւելեան երկաթուղեաց տնօրէն Պ. Սարաղէնի կոչնդիր յղուած լինելով, որպէս զի Պոլսոյ առեւտրական առաջին դատարանին ներկայանայ, օսմ. կառավարութեան յիշեալ ընկերութենէն պահանջած 13 միլիոն ֆր. ի խնդրոյն համար, այս դատ սկսաւ Նախընթաց օր։ Կայս. կառավարութեան կողմէ ներկայացած էին փաստաբանք Պ. Պ. Քառօ և Բօդա և Պ. Սարաղէնի կողմէ՝ երկաթուղեաց ընկերութեան փաստաբան Ինճէեան Միհրան էֆէնտի։ Երկու կողմանց պահանջումներն ու առարկութիւնները լսելէ յետոյ, նախագահը դատին շարունակութիւնը մէկ ամսուան թողուց։

Կայս. կառավարութիւնը կը պահանջէ վերոյիշեալ 13 միլիոն ֆրանքի գումարը, վասն զի, կըսէ, երկաթուղեաց չնուութեան թուականին՝ չնող ընկերութեան վճարած էր դան իւր երաշխաւորութիւն։

Վեհ. Սուլթանին հրամանաւ՝ գաղթականաց ընդհանուր վարչութեան նախագահ Եուսուֆ Բիգա փաշա յետ այսորիկ պաշտօնական համագրեստով ներկայ պիտի գտնուի Սէլմարքի արարողութեան։

—Վեհ. Սուլթանն, ըստ խնդրանաց Դատական Նախարարութեան, ազատութիւն շնորհեց տասն-մէկ ոճրագործաց, որք տասն-հինգ տարուան համար դատապարտուած լինելով իրենց պատժոյն տասն տարին և կամ աւելին լրացուցած էին։ Այս բանտարկեալք, որոց ինն այր և երկուքը կին, Նախընթաց օր ազատ արձակուեցան կեդրոնական բանտէն։

—Վսեմ. Մավրոյենի փաշա նախընթաց օր ռուսական դեսպանատուն երթալով, Վեհ. Սուլթանի կողմէ Պ. Նելիտոֆի որպիսութիւնն հարցուց։ Վսեմ. դեսպանին վիճակը լաւագոյն է։

—Նոր տարւոյ սկիզբը Պուլկարիոյ մէջ ընդհանուր մարդահամար մը պիտի կատարուի, վասն զի մինչեւ ցարդ որոշ ծանօթութիւնք չկան այդ երկրի ժողովրդեան ճիշդ թուոյն վրայ։

—Երէկ Ադրիանուպոլսէն մայրաքաղաքս ժամանեց տեղւոյն մաքսային տնօրէն Ահմէտ Քեամիլ էֆէնտի որ իւր պաշտօնին վերաբերեալ ինչ ինչ խնդրոց վրայ պիտի խորհրդակցի մաքսային վերատեսչութեան հետ։

—Առեւտրական և հանրօգուտ չինութեանց նախարար Զիհնի փաշա վերտին հիւանդացած լինելով, բացակայ կը գտնուի իւր պաշտօնատեղիէն։

—Զինիլի Քէօշկի կայս. թանգարանին համար հանդէպ կառուցանելի շէնքին չինութիւնը առաջ կը տարուին փութով։ յայտնի է թէ թանգարանին հնութեանց մէկ մասն անդ պիտի փոխադրուի։ Այս օրերս Լոնտոնէն յիշեալ թանգարանի տնօրէն Համտի պէյի ղրկուած են քանի մը մնատուկ հնութիւններ։

—Վեհ. Սուլթանը չորրորդ կարգի Օսմանիէ պատուանշան շնորհած է Զէյրեան Պրունուի հիւանդանոցին առաջին բժիշկ հաղարապետ Սալիմ պէյի ի վարձատրութիւն Նորա բարւոք ծառայութեանց։

—Այս գիշերուընէ սկսեալ մինչեւ մէկ ամիս Ղալաթիոյ կամուրջը գիշերուան ժամ ութին պիտի բացուի։

—Դատական Նախարարութեան վճակագրութեան դիւանի առաջին քարտուղար Բաղրպ պէյ Պատժական գործոց դիւանի առաջին քարտուղար անուանած և նմա յաջորդած է պատժական գործոց դիւանի առաջին քարտուղար Ալի պէյ։

—Կեդրոնական բանտին զինուորաց և ժանտարմաներու բնակութեան յատուկ շէնքը պիտի Նորոգուի ի մօտոյ։

—Երկու աղջիկ զաւակաց մայր յոյն կին մը, որ Թարապիա կը բնակի, ուր ամուսինը նպարավաճառի խանութ ունի, երեք ամիս առաջ անյայտ եղած էր ամուսնական յարկէն։ Իւր ծնողքը, որք Բերա կը բնակին, անոր հետքը գտնելու համար խուզարկութիւններ կատարել տալէ յետոյ աստ և ի Ցունաստան ուր ի սկզբան կը կարծուէր թէ ապաստանած լինի, այս օրերս հելլենական հիւպատոսարանին դիմած են որ քննութիւն մը հրամայած է։ (Լ. Թէ-րէ)

—Պուլկարական պատուիրակ Պ. Վուլբովիչ Փիլիպէի մէջ կանգ առած լինելով, այս առաւօտ միայն կը մեկնի անտի եւ հետեւաբար վաղն իրիկուն մայրաքաղաքս կը հասնի։

Ամեր ճերմակեղէններ գնելու ըսքանչելի առիթ մը կ'ընծայուի այս օրերս հասարակութեան, մեր այս աւուր չորրորդ երեսին ճակատը դրբուած ծանուցմամբ։ Անոնց և կանանց համար առաջին կարգի ճերմակեղէններ են ասոնք, որ կը վաճառուին հրապարակին վրայ անսովոր ածան գներով։ Վաճառման բարեգործական նպատակն ալ ոչ նուազ յանձնարարական մ'է ցիւր Մօնարքի վաճառատան։

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ

Ի ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

7/19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1887

ԵրԷ-ալ-Բէյ Երէկոյ

Ա. ԴԱԱՋԻՆ ՄԱՄ

Բէօլոնէզ —Թիվ Մօլ)
Պէրսէօզ —Տէվ տիւբ) ՇՕԲԻՆ

Տիկին Նաճալի Քալինօվսքի
Էքսոմաղ նուիրեալ առ Կուռնօ,
Երգ, երգեհոն և դաշնակ Հ. ՍԱԼՕՄՕՆ
«Թէ սիրէիր զիս» օսմանս ՏԻՆԶԱ.
Երաստանմ ԿՈՒՌՆՕ

Օր Ինննա Դարեալ Կարգանօֆ
Ֆանդէզի Կունօի Ֆառոդի ե-
դանակին վրայ ԼԻՋ

Տիկին Նաճալի Քալինօվսքի
«Ռուսլան և Լիւտմիլա» օբէ-
բայի եղանակ ԿԼԻՆՔԱ
Բօմանս «Երեկոյեան Ամառ»
Թանկագնէրի օրէրայէն ՀԱԿՆԷՐ

Օր. Ինննա Դարեալ Կարգանօֆ

• •

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՄ

«Սապա թագուհին» օրէրայէն ԿՈՒՆՕ

Օր. Ինննա Դարեալ Կարգանօֆ

«Պայազիտ» արեւելեան եղանակ Կ.ԿԱՐԳԱՆՕՖ

«Էկ ապանօզ»)
«Ին տէր Նախշ») ՇՈՒՄԱՆ

«Պարքարօլ» ՇԻՄՊԷՐ-ԼԻՋ

«Մտգիւրքա» ԿՕՏԱՐ

Տիկին Նաճալի Քալինօվսքի

«Կրէչէնսկ Սրինրատէ»))
«Օֆէնդալը») ՇՈՒՊԷՐ

Օր. Ինննա Դարեալ Կարգանօֆ

Նախերգանք Բօսկնիի «Կիլեսմ
Թէլ»ի ԼԻՋ

Տիկին Նաճալի Քալինօվսքի

«Ասրա» օսմանս ՐԻՄՍԿԻՆԳՈՒԱՅՈ
«Ամպեր» » ՏԱՐԿՕՄԻԺՍՔԻ
Երգ «Բոհեմա» օրէրայէն ՍԷՐՈՅ

Օր. Ինննա Դարեալ Կարգանօֆ

Օր. Կարգանօֆի և Տիկին Նաճալիի պիտի ընկերակցի Պ. ԻՊԱԼՕ ՍԷԼՎԷԼԼԻ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱԱՍ

Բարիզ, 15 դեկտ.

Նախարարական յայտարարութիւն մը, որ այսօր կարդացուեցաւ Խորհրդարանին մէջ, կը խօսի մանաւանդ ներքին օրէնքներու վրայ. կը յայտնէ թէ նախարարութիւնը կը փափաքի խաղաղութեան պահպանման յայտաքնուստ և թէ պիտի աշխատի մոռց խաղաղեցուցման ի ներքուստ։

Խորհրդարանն տպա քուէարկեց ելմտացոյցի առժամանակեայ եռամսեայ վճարում մը զոր կը խնդրէր կառավարութիւնն, ստանալով ելմտացոյցի ամբողջովին բուէարկման։

Օրէրա-Քոմիքի հրկիզման պատասխանատուութեան դատին մէջ այսօր տրուած վճիռն եռամսեայ բանտարկութեան կը դատապարտէ զՊ. Գարվալօ, տնօրէն այդ թատրոնին։

Բարիզ, 16 դեկտ.

Ռուսէ Էնվալիդի մէկ յօդուածն, որ ցոյց կուտայ թէ Ռուսիոյ պաշտպանողական տընորինութիւնք արդարացի են, ընդհանուր տպաւորութիւն կը գործէ։

Աթէնք, 15 դեկտ

Երեսփոխանաց ժողովը քուէարկեց ծախսուց ելմտացոյցն, առանց բնաւ փոփոխութիւն մուծանելու կառավարութեան ներկայած ծրագրին մէջ։—Ընդդիմադիր կուսակցութեան ոչ մէկ երեսփոխանը ներկայ էր նստին։

Աթէնք, 16 դեկտ.

Պ. Տէլիեանիի պաշտօնական Բիւլէտէն այս առաւօտ կը հրատարակէ յայտարարութիւն մը որ կ'ամփոփէ ընդդիմադիր կուսակցութեան տրուած ընդդէմ Պ. Դրիքուբիի նախարարութեան եւ կը ծանուցանէ թէ ընդդիմադիր կուսակցութիւնն ալ չպիտի մասնակցի Խորհրդարանին աշխատութեանց, պատասխանատուութիւնը թողլով կառավարութեան վրայ։

Կառավարութիւնը նիստ կազմելու չարաւական մեծամասնութիւն մ'ունի, մինչեւ իսկ ի բացակայութեան ընդդիմադիր կուսակցութեան բոլոր երեսփոխանաց։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 5 Դեկտեմբեր

Օսմանեան Բենսօլիտէ

Դահեկան

Երէկ երեկոյ գոց. (Միաց. 1)	Սէրի Գ.	Կ.	15 17 1/2
Պօրսային գոցուելէն վերջը	»	»	15 17 1/2
Բէրպայի մէջ	»	»	— —
Աւառատուն բացուեցաւ	»	»	15 16
Բարձրագոյն գին	»	»	15 16
Նուազագոյն »	»	»	15 16
Կէս օրին	»	»	15 16

ԸՆԹԱՑԵՔ ԱՐՏԱՔԵՂԸՆՈՅ

Փոխառութիւն 1858)	Ա Սէրի		23 30
» 1862)			
» 1860)			
» 1863) Բ	»		14 20
» 1872)			
» 1865)			
» 1869) Գ	»	Օ.	15 16
» 1873)			

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 16 դեկտ. Ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. բանսիտէ		101 15/16
Օսմ. »	Սէրի Դ. բացուեցաւ	13 7/8
» »	» գոցուեցաւ	13 15/16
» »	» Ա.	23 1/2
» »	» Բ.	14 1/4
» »	» Գ.	13 3/4
Օթօման 1871		7 2
Փոխառութիւն 1877		85 1/2
Պանք Օթօման		10 1/8
Ռուսական փոխառ. 1873		93 1/8
Եգիպտական միաչեալ (ինդիֆիզ)		73 3/4
» սուանեն. (բրիմիէտիտ)		98 3/8
Տպարտ Սանիէ		70 1/8
Տօնանիալ (փոխառ. Բօշիլտ)		93 7/8
Հունգարական պարտատերերի 4 %		— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ		25 55

Վիէննա, 16 դեկտ. Ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	126 50
Օսմանեան երկաթուղի	17

Բարիզ, 16 դեկտ. Ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթի 4 1/2 %	107 70
» » 3 %	81 40
Օսմանեան բանսիտէ Սէրի Դ. բացուեցաւ	14 05
» » » գոցուեցաւ	14 05
» » » Բ.	— —
» » » Գ.	13 95
Օսմանեան երկաթուղի	35
» Բէյրութի բամնեթուղիք	— —
Պանք Օթօման	508 75
Գրէտիտ Լիոնէ	575
» Ֆոնտիէ	1410
Բամնեսոմ Լիոնի	1250
Սուէզի ջրանցք	2097 50
Ռուսական 5 % 1877 թ.	101 3/4
Իտալական Ռանթ	97
Սպանիական (արտաքին)	67 3/4
Եգիպտական միաչեալ	375
Բրիօրիթէ թիւրք	358 75
5 % Հելլենական	365
Զէք Լոնտրայի վրայ	25 34

ԲԱՐԻԶ ԹԻԹԻ ՊՈՒՐՍ

Բարիզ, 16 դեկտ. ժ. 10 վ. 30 երեկոյ

Ֆրանսական Ռանթի 4 1/2 %	— —
Օսմանեան բանսիտէ	14 07 1/2
Եգիպտական	375

Պ. ԳՕԹԼԻԷՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

Նոր Թատրոնի տարեգրութեանց մէջ անջնջելի էջ մը պիտի գրուէ 1887 տարւոյ դեկտեմբերի առաջին եօթնեակն, յորում նմանը դուռնուրեք տեսնուած հոգ և ընտիր բազմութիւն մը կը խառնի անընդհատ ամէն գիշեր թատրոնի սրահն ու օթեակները՝ տեսնելու ու ծափահարելու համար զՊ. Գոթլէն, բարիզեան մեծանուն դերասանն որ իւր քառորդ դար ժամանակ գլխաւոր փառքն ու պարծանքն եղած է Քոմէտի-Ֆրանսէզին։ Եւ արդարեւ Պոլսոյ հասարակութիւնը—ու ոչ թէ միայն Բերայցին—ամէն թաղերէ դիմելով ի Նոր Թատրոն, վայելու համար այս հազուագիւտ առիթին ընծայած հաճոյքը, մեծ արուեստաւոր մը ու թատերական տաղանդ մ'ըստ արժանւոյն գնահատելու կարողութիւն և գեղեցիկ ճաշակ ցոյց կուտայ միանգամ ևս, արժանավայել հանդիսականաց։

Երէկ գիշեր Դ. և գուցէ վերջընթեր ներկայացում Պ. Գոթլէնի խմբին։ Եմիլ Օժիէի մէկ գեղեցիկ թատերգութիւնն էր զոր կը ներկայացուէին, «L'aventurière», ոտանաւոր գրուած՝ այնքան բարձրագոյն որքան զուարթուն, այր ամէն մէկ դարձուածն նորութիւն մ'էր ակնարժէք, իրական կեանքէ առնուած, և ամէն մէկ խօսքն հմտալից, հանճարալից։ Պոսկեցւոյս համար նոր էր այս խաղ, և թատերասիրաց համար բազդաւորութիւն մը պէտք է համարիլ որ առաջին անգամ Պ. Գոթլէն և իւր դերասանք ներկայացուցին զայն, լիովին ըմբռնած և լիովին արտափայլեցնելով Ֆրանսացի ակադեմականին գործոյն բոլոր նրբութիւններն ու բոլոր գեղեցկութիւնը։

Թողլով առ այժմ պատմել խաղին նիւթը—վասն զի կէս գիշերն անցած էր արդէն երբ իջաւ վերջին արարուածն—յիշենք միայն ներկայացման եւ մանաւանդ օրուան արուեստագէտին՝ Գոթլէն հոր՝ թողած տպաւորութիւնն։ Անոնց համար որք երկուշաբթիէն ի վեր զայն քանիցս տեսնելու գնացած էին արդէն եւ անոնց համար որք առաջին անգամ պիտի ունենային այդ հաճոյքն, հաւասար հետաքրքրութիւն մը կը տիրէր։ ո՛չ ոք ուշադրութիւն կընէր թէ նուագարան չկիայ, թէ գնորն անօրինակ կերպիւ բարձրացած էին, թէ յեղաշրջում մը կատարուած էր,—վասն զի սովորաբար թիկնաթոռները բազմոց հանդիսատեսաց չատեր ինքզինքնին քաշուելին մէջ կը գտնէին այժմ եւ օթեկաց ընտանի հանդիսատեսք մեծաւ մասամբ իջած էին թիկնաթոռներուն վրայ որոց բարձրագոյն գինն էր 25 ֆրանք եւ ստորնագոյն գինը 2 մէջիտիա—։ Ընդհանուր անձկութիւն մը կը տիրէր ամբողջ սրահին մէջ երբ բացուեցաւ վարագոյրը։ Ծերունի մը կերեւէր թատերարեմին վրայ, իւր բարեկամին հետ խօսակցելով։ առաջին խօսքերէն՝ շատեր կը հարցնէին իրենց ա'մոռա'ցաց «Այս է։»—«Ո՛չ։»—։ Պահ մը յետոյ կը մտնէ երիտասարդ մը։ «Հապա այս»—Դարձեալ ո՛չ։»—Ու խաղը կսկսի եւ կը շարունակուի այսպէս, առանց մեծ դերասանին որ որքան կը յաջողէր երեւնալու այնքան աւելի հետաքրքրութիւն կ'ազդէր եւ անեղեւոյթ հոգիի մը պէս կը սաւառնէր զոգեաց սրահին մէջ։ Առաջին արարի Ա. պատկերը կը փակուի առանց Պ. Գոթլէնի, այլ երկրորդն ապահովաբար է անուշտ։ Եւ արդարեւ երկրորդ տեսարանի սիկքն ընդհանուր ծափահարութիւնք կ'ողջունեն նորա մուտքը։ Պ. Գոթլէն կը կատարէր Տօնոնա Անենպալի դերը։ վաղեմի զինուորական մը՝ զուարթախօս ու հեգնող բնաւորութեան տէր, յոխորտացող եւ երկչոտ միանգամայն, որ գռուռգոչումներ կը հանէ առանց պաղարիւնութիւնը կորսնցնելու։ Պ. Գոթլէն յինքն մարմնացուած էր այն անձնաւորութիւնը զոր հեղինակն երեւակայած կրնայ լինիլ խաղին կատակերգակ դիւցազնին համար։ Ինչ որ առաջին վայրկեանէն կը նշմարուի մեծանուն դերասանին վրայ, այն ամենակատարեալ կերպիւ բնական երեւցմանն է զոր կուտայ իւր ձեւին, իւր ձայնին ու շեշտին, կարծես դեր մը չէ որ կը կատարէ, այլ մարդն ինք է որ կը խօսի։ ամենաթեթեւ մ'ի չարժման, ամենափոքր մէկ ընդմիջմանը մէջ արուեստ կայ և նրբութիւն։ անընդհատ ծիծաղներ կը խլէր հանդիսականներէն, բայց ո՛չ այն ծիծաղը զոր յառաջ կը բերեն գռեհիկ խեղկատակութիւնք։ հանդիսատեսք խաղէն աւելի կը հետաքրքրուէին իւր շարժումներուն և հնացմունք ու քթքինք չափ չունեցան, երբ երկրորդ արարուածի վերջերը, սեղանակցելով երիտասարդ ապլի մը հետ, որ դերան լարել կ'ուզէ իւր քրոջ դէմ, վարպետի զինուորականը կ'արթնայ, կը զուարճանայ, տակաւ առ տակաւ արթնութիւնը կը կորսնցնէ, գաղտնիքներ կը թափէ բերնէն, յանկարծ կ'ուշաբերի, խօսքը կը փոխէ, կ'երգէ և թիկնաթոռին վրայ կ'ինկնայ կը մրափէ։ Այս գիրքին վրայ փակուեցաւ Գ. վարագոյրն և երբ բացուեցաւ չորրորդն, նոյն գիրքին մէջ կը մրափէր տակաւին Պ. Գոթլէն։ Այն գիծուարին դերերէն մին էր այն զոր սովորական դերասաններու տրուած չէ կատարելը ըստ արժանւոյն։ և եթէ մի և նոյն հանդիսատեսք՝ տասն անգամ ներկայ գտնուին այս մի եւ նոյն խաղին, անտարակոյս նորանոր հաճոյքներ պիտի զգան ամէն անգամ, արուեստական տեսակէտով, եւ նորանոր նրբութիւններ պիտի նշմարեն։ Բ. արարուածի վերջը Պ Գոթլէն ստացաւ ծաղկեայ խոշոր պսակ մը, եռագոյն գրօշակներով զարդարուած։ Երկար կ'ելլայ նկարագրել ատ խաղին մէն մի մասն յորս նորանոր ճարտարութիւններ ի յայտ կը բերէր, եռանդագին ծափահարութեանց մէջ տեղ։ Այլ իրմէ անբաժան էր միշտ բնական պարզութիւն մը որ կ'երեւի թէ Պ. Գոթլէնի գլխաւոր արժանեաց մին եղած լինի ամէն ժամանակ, չմոռնալով պատուական առոգանութիւնն։

Արգարութեան պարտք մ'է յիշատակել ատ նաեւ անունը Տիկին Բաղրիի որ կը կատարէր Տօնոնա Անենպալի դերն, բաղդախնդիր կին մը՝ որ ընկերականութեան ամենէն ստորին ասպիճաններուն վրայ իւր առաջին երիտասարդութիւնը մաշեցուցած՝ չափահասութեան տարիքին մօտ՝ շնորհց ու գեղեցկութեան մնացորդի մը ապաւինած կը տենչայ ամուսնանալ ծերունի իշխանի մը հետ, որ գաղտնապէս թոյն կը ժայթքէ բարձր դասու կանանց դէմ եւ կեանքը կուտայ՝ այդ ամուսնութիւնն յաջողցնելով՝ անոնց հաւասար տիտղոս եւ հաւասար պատիւ վայելել։ Տիկին Բաղրի հիանալի կերպիւ կատարեց իւր դերն որ չատ մը յուզիչ մասեր ունէր եւ քանիցս արժանացաւ որոնդոսա ծափահարութեանց։ Պ. Գոթլէնի ուղեւորութեան մէջ, Լրբ մեծանուն դերասանը բարեկեան թատրոնի մասնաճիւղ մը կընծայէ գլխաւոր մայրաքաղաքաց, իւր այդ արժանաւոր ընկերուհին եւս կենթադրենք թէ իւր կողմէ կրնայ ներկայացնել ամենուրեք բարեգեան ճշմարիտ դերասանուհւոյ մը տիպարը։ Պ. Գոթլէնի որդին եւս՝ որ իւր հոր ձեռաց ներքեւ կը վարժուի արուեստին՝ բաւական ուշադրութիւն կատարեց երիտասարդի դեր մը։

• •

Միջնարարի միջոցին

գլխի շարժումներով, կոկորդային ձայներով, կարծես առանց կասկածելու թէ ի՞նչ ծիծաղներ կը խլէր իւր արտասանութիւն։

Այսպէս Պ. Գօբլէն մէկ երեկոյթի մէջ իւր արուեստական բարձր կարողութեանց ամեն ճիւղերուն վրայ ճաշակ մը տուաւ Նոր Թատրոնի հանդիսատեսաց օրք սքանչացմամբ, և մանաւանդ վերջին նմանողութեան համար ծիծաղներով մեկնեցան։

Տ.

ՈՒԽՏԱՒՈՐԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Էջմիածին որ հասայ՝ Ժամանակը արդէն բաւականին անագան էր, ուստի նոյն օրը չի կարողացայ իմ ուխտը կատարելու։ Գըրիգոր Լուսաւորչի սուրբ աջը և Քրիստոսի Գեղարգը համբուրելու՝ և կամայ ակամայ սրտիս ներս հեւեւեալ օրուան թողնել։ Վանքի հիւրընկալ, քաղաքավարի քաղդրաբարոյ և համեստ Ղեւոնդ երիտասարդ վարդապետը, իսկոյն հոգս տարաւ պանդխտս ահնակրեալ սիրտոյքը լցնելու։ պատրաստեց մի բաւական մաքուր խուց, մէջը չարիլ տուեց մաքուր կահկարասիք, կարգեց անկողին ու բարձեր, ճիւնի պէս սպիտակ կտաւիք, անթափանցելի (ժեղներից) վարագոյր և փաչայի վայել կերպասեայ վերակ։ այս ամենը գրեթէ մի ակնթարթում կատարելուց յետոյ՝ ում որ հարկն էր՝ ապսպրեց թէյ և ընթրիք։ Քաղաքավարի ոպասաւորը տեղական գովանի սովորութեամբ, բերեց կոնք և սառը ջրով կուժ և տուեց ինձ լուացվելու։ Վրայիս փոշոտած հալաւները հանեցի, պատհատի մաքուրներս հագայ։ այդ միջոցին էլ ներս մտան իսկ հին բարեկամք՝ Ներսէս եպիսկոպոս Խուդավերդեանը և Կարապետ եպիսկոպոս Այվազեանը՝ ու մենք իրար բարեւելուց յետոյ, պանեք այն սրտաոր չ և անվերջանալի խօսակցութիւնն, որ մեծ խնամ ունի ասողի ու լսողի համար և որն անհսկանալի է դառնում, հէնց որ գրի է առնվում։

Ա։ հասարակ պէտք է խոստովանել, որ Էջմիածնի մէջ կեցող հարքը ըստ արժանւոյն գնահատուած չեն հայ ժողովրդէն։ Էջմիածնի վերաբերութեամբ հայերս չափազանց խստապահանջ ենք ու չափազանց անարդար։ Ի զուր ենք մեր «երեքանների մասնաքի» դարձրել թէ՝ Էջմիածինը ժողովրդից ամեն բան սոսնում է ու ոչինչ նորան չէ տալիս։ Սո՛ւտ են այդ խօսքերը, սո՛ւտ են հոգար անգամ էլ կասեմ, որ սո՛ւտ են։ Առաւել արդարացի կը լինէր, եթէ այսպէս ասէինք՝ Էջմիածինը տանում է ժլատ ժողովրդի մուրացիկ լուսաները եւ տալիս է նորան առատաձեռն իշխանի նման ագուռ ագուռ ոսկիներ։ Մե՞նք ենք Սուրբ-Աթոռի միաբանների բոլոր տարուստը հայթայթողը։ Մե՞նք ենք տարին տասներկու ամիս 40)ի չափ հայ մշակներ, հայ աղքատներ, հայ ասպնջականներ կրշտանողը։ Մե՞նք ենք մոտ 130 հոգի ձեմարանական գիշերօթիկ աշակերտներին հագցնողը, կերակրողը, ուսուցանողը։ Մե՞նք ենք 15—20 ճեմարանական ուսուցչապետներին և ուսուցիչներին ահագին ռոճիկներ տուողը։ Մե՞նք ենք անհամար ճանրորդների, ուխտաւորների ամեն տեսակ պետոյքը լեցնողը Մե՞նք ենք հազար ու մէկ տեսակ ծախքեր անողը, որոց առնուները անգամ այս բոպէիս միտքս չէ՛ գալիս։ Եւ ի՞նչ է մեր տուածը, ասացէք ի փառս Աստուծոյ։ այն մեր գուն ուրեք 3—4 մանէթ չպրտածը հազա՞ր տրտունջով, հազա՞ր գանգատով, հազա՞ր բարտանքով..... Եթէ երեսներիս վրայ ամօթ ու մէջերս մի կարիլ խղճմտանք է մնացել, գոնէ լռել գիտանք, եթէ ազնիւ լինելը մոռացել ենք... Էջմիածնի ամեն մի քարը մեզ յիշեցնում է նորա անբաւ երախտիքը ազգիս վրայ սփռուած ե., փոխադարձաբար, հայ ազգի ամեն վայրկենի ապերախտութիւնը դէպի նա—դէպի մեր միակ յոյսը, միակ պարծանքը, միակ մխիթարութիւնը աշխարհիս երեսին։

Կայ ապէտ եպիսկոպոս Այվազեանի հետ ես ծանօթացել էի դեռ ես նորա վարդապետ եղած միջոցին, օրէս 7 տարի առաջ, Երեւանում Լեւոն Տիգրանեանի տանը, եւ շատ սիրել էի նորան՝ նորա պարզ հոգու և թարմ սրտի համար։ եւ եթէ չեմ սխալում տարիները գէպի վատը ներգործած չեն նորա վրայ։ ես մեծ յոյսեր կը տածեմ, որ նա իր տանձնած թեմին մեծամեծ բարոյական օգուտներ կուտայ, եթէ միշտ այնպէս մնայ, ինչպէս որ ճանաչել եմ նորան։

Ներսէս եպիսկոպոս Խուդավերդեանը Սուրբ-Աթոռի շահերի ամենաջերմեռանդ և անկաշառելի պաշտպանն է։ Ես նորան այսպէս ճանաչել եմ դեռ ես 1879 թը-ին, երբ առաջին անգամ ուզս դրի էջմիածնի հողի վրայ։ ուրեմն ութ տարի առաջ այս երիտասարդ եպիսկոպոսը դրաւել էր իմ համակրութիւնը իւր անսեթեւեթ և անկեղծ վարմունքով։ Այն միջոցին ես էշ շատերի նման նախապաշարուած էի էջմիածնի ներքին կառավարութեան մասին և մտքիս մէջ կուտակուած էին զանազան յուզուի գաղափարներ հայոց Սուրբ Տեղեաց վրայ։ Երբէք չեմ մոռանալ Ներսէս եպիսկոպոսի իմ վրայ կատարած բարի ազդեցութիւնը՝ վերաբերութեամբ Աթոռին։ նա ցուցութիւնը՝ վերաբերութեամբ Աթոռին։ նա էր, որ իւր անուշ պատմութիւններով իմ սրտէն փարատեց այն վատ կարծիքներն, որ, ընդ պատրուակաւ բարեկամութեան, սերմանել էին նոյն իսկ էջմիածնի ծոցում տաքցած օձերը։ Եթէ այս օրուայ օրս ես անկեղծօրէն սիրող եմ թէ էջմիածնին և թէ նորա մէջ գործող անձանց, եթէ այս օրուայ օրս ամենամաքուր գաղափար ունիմ Սուրբ Աթոռի մասին, դորա միակ պատճառն է Ներսէս եպիսկոպոսը, որն—եթէ այդպէս կարելի է ասել—այս դէպքում հօր ու որդու հաշտեցնող հանդիսացաւ։ Էջմիածինը 1879 թուականին և էջմիածինը 1887 թուականին այնքան աննման են միմեանց, ինչպէս որ ովկիանոսը և ցամաքահողը։ Սարսափելով երեւակայում եմ թէ՝ այս օրուայ օրս ի՞նչ աչքով պիտի նայէի թէ՝ աշխարհի և թէ՝ ինքս իմ վրայ եթէ ութը տարի առաջ լսածս և տեսածս հէնց այն ժամանակ և եթէ անխոհեմաբար նկարագրէի..... Օրհնուի՛ն ուրեմն այն անմոռանալի ժամերն, երբ Ներսէս եպիսկ. հետ առանձնացած նորա խցումը՝ լսում էի իմ մէջ դիզուած ամբաստանութիւնների և բամբասանքների հերքումները.... Ժամանակաւոր մէգը ու մառախուղը փարատեցան։ և այսօր թէ ինքը Սուրբ Աթոռը և թէ՝ նորա սպասարկուք սուրբ, անարատ և պատկառելի մնացին իմ աչքումս։

Հետեւեալ օրը, որ էր երկուշաբթի (յուլիսի 24) անցուցի, այցելելով վանքում ներկայ գտնուող սուրբ հայրերին։ բացի Սուքիաս Ս. եպիսկոպոսէն, Սինոդի բոլոր անդամք այնտեղ էին։ Գնացի աջերը համբուրելու և օրհնութիւնները խնդրելու՝ Թադէոս արքեպիսկոպոս Սիւնայանին, Արիստակէս եպիսկոպոս Գասպարեանին, Սարգիս եպիսկոպոս Տէր-Գասպարեանին, Երեմիա եպիսկոպոս Գալստեանին։ Իւրաքանչիւրի խցի մօտ մի մի ժամ մնացի։ Մեծապէս շնորհակալ եմ։ ամենքը ընդունեցին ինձ մեծ քաղաքավարութեամբ և մարդասիրութեամբ, որ լիապէս պատիւ կը բերէ նոցա լուսաւոր մտքերին և ազնիւ սրտերուն։ Ամենքը գոհ էին իրանց վիճակէն։ անկեղծ երախտագիտութեամբ յիշում էին Վեհափառ կաթողիկոսին անունը, որ կարճ միջոցում դրել էր նոցա այն բարձր պատուանդանի վրայ, որն վայել էր նոցա կրած աստիճանին, ալեզարդ ամացը և մարդկային արժանաւորութեանց։ Ոչ թէ բերանէն խօսք, երեսների տխրաբէն նշմարը անգամ չի նկատեցի իւրար դէմ առելութեան, կասկածի կամ դժգոհութեան, իւրար մասին գովասանքով և պատկառանքով էին վերաբերվում՝ առանց ստորաքարշ շողոքորդութեան։ Բաց ի այն ծանր պաշտօնէն, որ իւրաքանչիւրը ունի թէ՝ Սինոդի և թէ՝ վանքային կառավարութեան մէջ, այս պատկառելի ծերունիները դեռ ես ժամանակ գտնում են։ բացի հոգեւոր գրքերէ, նաեւ աշխարհային գրքեր կարդալու։ Քանիսի մօտ տեսայ ռուսաց լրագիրներ և աշխարհագրոյց տախտակներ։

Առ հասարակ պիտի խոստովանիմ, որ իմ վրայ Էջմիածնայ միաբանութիւնը այս անգամ շատ սիրախարար տպաւորութիւն գործեց։ «Ահա այժմ, ասացի մտքումս, Էջմիածինը պարծանքով կարող է ասել, որ ունի միաբանութիւն վասն զի նորա մէջի բնակողք միասիրտ, միահոգի միացած են յօգուտ մեր սուրբ եկեղեցւոյն։»

Նոյն օրուայ երեկոյեան ժամասացութիւնէն յետ խնդրեցի Աւագ Լուսաւորչ եպիսկոպոսին, որ բարեհաճի բանալու թանգարանի դուռը, ուր պահուած են հայկական եկեղեցւոյ պարծանք՝ սուրբ Գրիգոր-Լուսաւորչի աջը որի առջեւ ծնրադրելու և որին հարուրելու համար յատկապէս թողել էի տունս-տեղս և անցնելով տարեր ու ձորեր՝ եկել էի այստեղ։ Անշէնշնորհակալ եմ յիշեալ եպիսկոպոսին. բարձրաստիճան հոգեւորականի վայել քաղաքավարութեամբ խօսքս կրկնել չթողեց և ամենայն պատրաստութեամբ կատարեց իմ խնդիրս խնդիրը։ ուղեկցութեամբ պատկառելի հարց՝ Ներսէս Մամիրէ և Երեմիա եպիսկոպոսներին մտաց Էջմիածնի հռչակաւոր թանգարանը, մտնեցայ պահարանին (ուր պահուած են գանազան սրբոց մասունք) նախ՝ երեք անգամ երկրպագութիւն արի եւ ապա բարձրանալով մի արկղի վրայ՝«ահա և դողութեամբ» համբուրեցի սուրբ Գեղարգը և Լուսաւորչի Աջը։ եւ ասես թէ անոնելի բեռը, որ տարի ու կէս ծանրացած էր խղճմտանքիս վրայ, իսկոյն վայր ինկաւ, ու ես թեթեւցայ։

Մեծ ազդեցութիւն ունի մարդուս վրայ պարտքի հասուցումը, թէկուզ նիւթական լինի նա, թէկուզ բարոյական։

Նիւթապաշտնե՛ր, երկրայոդնե՛ր, անաստուածնե՛ր, կարդալով այս տողերս՝ ինչ կուզէք մտածեցէ՛ք կամ բարբաջեցէք իմ մասին, հոգս չէ։ ես ձեզ միայն այս կասեմ, որ այն վայրկենին ես ձեզմէն շատ ու շատ երջանիկ էի, վասն զի իմ հոգին սաւառնում էր եթերների մէջ, մինչ ձերը թաւալում էր ձեր առօրեայ կեանքի գարշահոտ ճահճումը։

Միայն նա կարող է կոչուել մարդ, որ ունի հաւատ։ առանց հաւատի մարդ չկայ, այլ կայ մարդակերպ գազան։

—

Միւս օր Արիստակէս եպիսկոպոսը բոլոր միաբանութեանը մի համեստ հացկերութիւն հրաւիրեց։ ինձ ես պատուեց իւր հրաւէրով։

Կրկնում եմ և երեքկնում եմ, որ սուրբ Էջմիածինը իւր պատկառելի միաբաններով վրայ այնպիսի տիրական ազդեցութիւն գործեց, որ ես հոգւով չամ ուրախ եղայ և միամտուեցայ, որ հայոց բանաւոր հօտը այսպիսի քաջ և արթուն հովիւներով երբէք չի գլորուիլ այն խորխորատն, որ անդգամի կերպով պատրաստում են մեզ համար մեր երեւելի և աներեւոյթ թշնամիները։

Երեկոյեան դէմ Սրբազան Ներսէսը նամա՛կ սուտացաւ, ուր գրած էր, որ Վեհափառը խնամալով իմ Էջմիածին ժամանելը, ցանկանում է ինձ տեսնել, և հրաւիրում է Բիւրական կոչուած գիւղաքաղաքն, ուր նա անցնում է ամառուայ ութ ամսին գիւղը և որ Վաղարշապատն քսաներկու վերստ հեռաւորութիւն ունի։

—

Վաղարշապատէն դուրս չեկած՝ երկու խօսք էլ խօսինք մեր սուրբ Աթոռի չէնքի մասին, որն այս օրուայ օրս հայկական հերմական հարցերէն մէկն է։

Դու անշուշտ լսած կը լինիս, սիրական Խաչերես, որ տմեն տեղ խօսվում է և մեր ամեն լրագիրների մէջ գրվում է, որ Էջմիածնի չէնքը հնացել է, քայքայուել է, օրէ օր աւելի և աւելի սպառնանում է կործանուելու, եթէ վաղօրօք չի նորոգուի ի ներքուստ և յարտաքուստ։ Լսողն կամ կարդացողի համար շատ զգալի չէ՞ այսպիսի չարաշուք լուրը մի հեռաւոր թշուառութեան համար։ բայց երբ որ ես ինքս իմ աչքերովը տեսայ մեր ամենահին սրբավայրը այդ քստմնելի վիճակի մէջ, երբ որ տեսայ մեր սուրբ Տրդատի և սուրբ Լուսաւորչի ձեռքերովը տաշած քարերը քերքերուած, փխրուած, մաղուպատ և օդէն, խոնաւութենէն և տարուայ եղանակներէն քայքայուած և պատրաստ փլելու ու փոշի դառնալու՝ յիրաւի՝ հոգւով մարմնով սասանեցայ։ Այո՛ այո՛, եթէ այսօր, վաղը, մէկ քանի օրէն, կարճ՝ եթէ այս մտրիկ ապագայում արագապէս փոթ չտրուի՝ մի չարաբասի՛ օր պիտի լինէ, որ մեր սուրբ յիշատակարանը, մեր ազգային միութեան գրօշակը—սուրբ Էջմիածինը, մեր բոլոր ազգի միակ պարծանքը փլատակ է դարձել Երկար բարակ մտածելու. դատելու, ճառաբանելու ժամանակ չի կայ։ Ամեն ոք հայ, սարսափը երեսի վրայ նկարած, հապճեպով պիտի թռցնէ իւր լուման դէպի սուրբ Աթոռը և այս՝ մուրացիկ ազքատէն ըռնած մինչեւ մարմարեայ պալատում բնակող միլիոնատէրը։ Եւ ի՞նչ բան է մի խելօք, աշխատասէր և ճոխ հինգմիլիոնեայ ազգի համար թշուառական հարիւր յիսուն հազար մանէթը, երբոր այդ չնչին գումարը կարող էր ոչ թէ մի ամբողջ ազգէ, ոչ թէ մի որ և է երկրում բնակող ժողովրդէ, ոչ թէ մի քաղաքում կեցող հասարակութենէ այլ մինչեւ անգամ մի անհատ քսակէ դուրս գալու։ Ո՞ր հայարնակ քաղաք չունի 4-5 սպանիսի հարուստներ, որոնք մի խաչ կամ մի չքագրամ ստանալու յուսով՝ մի գնուորանոց, կամ մի օտարազանի եկեղեցի չինած չը լինին մօտ այդքան գումարի։

Ամօթ չէ՞ հայ ազգին 150,000 չնչին գումարի առջեւ կանգ առնել, երբ մենք շատ լաւ յիշում ենք, որ մի երիտասարդ պարոն 80,000 մանէթ ծիծաղելով վատնեց թաքնարատ *)։ երբ ամեն փոքրիկ բաղ հանիւր խնդոյքի մէջ տասը—քսան հազարներ տարում ու տարվում են թղթախաղի սեղանին առջեւ։ երբ մենք հաւատի գիտենք, որ կան հայեր, որոնք տարեկան 50, 100, 150, մինչեւ անգամ 300 հազար մանէթի արդիւնք ունին։ երբոր մի օտարազգի դերասանուհիի քսանհազարնոց ականակուռ մանեակ ընծայող հայազգի կայ։

Հարցնում եմ 150 հազար մանէթը ի՞նչ մեծ գումար է հինգմիլիոնեայ ազգի համար, երբ թուաբանական հասարակ հաշիւը մեզ ցոյց է տալիս, որ եթէ ամեն մի հոգէ 3 ական կոպէկ ժողովուի՝ լիովին պիտի կազմուի այդ գումարը, եւ Էջմիածինը, հազար հինգ հարիւր տարուայ Էջմիածինը, այս՝ մեր Տրդատ թագաւորի եւ Գրիգոր Լուսաւորչի սուրբ ձեռքերով կառուցած ազգային կոթողը՝ ինչպէս ազգային միութեան դրօշակ, յանասանի պիտի մնայ։ Էջմիածինը, ասում եմ, որի մէջ եկած՝ սուրբ մ.ւռնը, որ ամենից ճակատին դրօշված է ամենից պիտի յիշեցնէր և վերանորոգել տար մեր խնամուն նախնիքներէն մուցած Դ-ՈՅՆ ԽՈՍՔԷ **)։

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

Սեւ ծով, Մէնդրելէ շրջանա (Աբխազիա)
7 Օգոստոսի 1887 թ.

*) Թաքնարը մի տարօրինակ զրօսանք է, որ այսպէս է կատարվում։ 3—4 խելագարներ մարդոց 100—300 մանէթի հանում են և սկսում են թաքնել, մէջերէն ով աւելի հեռու թաքց՝ նա ընկերներէն տարած է համարվում մէջ հանած խաղադուարը։

(**) Մեռանի ոսկէնը խորին հնութեան մի ազգային ընդհանուր տուրք էր, որն վերջացած է մօտ 100 տարի սորանից առաջ։ Երեխայութեանս ժամանակ լսել եմ ծերերից, եւ անշուշտ մի օր դիպուած կը գտնեմ մանրամասնօրէն խօսելու սորա մասին։

Դ. ԿԻՊԻԱՆԻ

Անցեալները բաւական մանրամասն գրուեցաւ Վրացի հռչակաւոր հայրենասէր Կիպիանիի սպանման առթիւ։ Այդ անձ, թէեւ անծանօթ ի մեզ մեծ համբաւ և խորին հաւակրանք կը վայելէր ի Կաւկասիա, մանաւանդ Վրաց մէջ, որովհետեւ կը ներկայէր իւր մէջ Վրաց մարմնացեալ հայրենասիրութիւնը։ Վրաստան որ ի խոր սուգ հագնուած էր իւր մեծ զաւկի սպանման համար, ուզեց իւր գրկաց մէջ թաղել իւր այդ պաշտելի զաւակը։ Մարմնոյ փոխադրումն Ստաւրոպոլէն ի Թիֆլիս, իրաւամբ կը ներկայէր մեծահանդէս և տխուր յուզարկաւորութիւն։ Ամենուրեք յարգանաց և ջերմեռանդութեան ընդհանուր արտայայտութիւն կը ցուցնէին այն անշուշտ մարմնոյն, որ իւր կեանքը նուիրած էր իւր ազգի բարօրութեան։ Ստաւրոպոլէն Վլադիկաւկաս, ամբողջ տարածութեամբ, ճանապարհի վրայ կեցած էին խուռն բազմութիւն մարդոց, որ դադարեցնելով իրենց ղբաղումը, փակելով իրենց խանութները, դիմաւորած էին իրենց յարգանաց վերջին պարտքը մատուցանելու, և մի անգամ եւս ապացուցանելու սիրոյ այն անկեղծ և սրտագին զգացումներն որոց տիրացած էր հանգուցեալն իւր կենաց գինով։ Այդ պահուն հոգեհանգստեան պաշտօն կը կատարուէին ի Պետերբուրգ, Մցխեթ, Դուշէթ, Քութայիս, Բաթում, Խոնի, Գորի, Ալսաղցխա, Ախլքալաք և այլ բազմաթիւ տեղեր։ Իսկ ամենէն սրտայոյզ հոգեհանգիստը կը կատարուէր ի Թիֆլիս, ուր խօսուած ճառերը կը նկարագրէին Կիպիանիի անձնաւորութիւնն ու արժանիքը։ Ցաւակցական շատ մը հեռագրեր կը հասնէին Իշխ. Խմբագրատունն և հանգուցեալի ընտանեաց։

Կիրակի, նոյեմբեր 8ին Կիպիանիի մարմինը բերուեցաւ Թիֆլիս։ քաղաքէն մի քանի վերստ հեռու ձիով և կառքերով դիմաւորած էին Վրաց ազնուականութեան ներկայացուցիչներն, արհեստապետները սգակիր դրօշակներով և ժողովրդեան խուռն բազմութիւն, որ վայրկենէ վայրկեան կ'ստուարանար, դրաւելով ամենաընդարձակ տարածութիւն։ Ցուղարկաւորութիւնն սկսաւ յառաջանալ դէպ ի քաղաք, հաղարաւոր տխրադէմ, գլխիկոր և զնուորական մարդիկ կը հետեւին դագաղին, զոր կը կրէին Կիպիանիի պաշտողներն։ իսկ դագաղին կը հետեւէր մի կառք լի պսակներով։ Դոնդուկով իշխանի հրամանաւ յուղարկաւորութիւնը պիտի անցնէր Թիֆլիսի ամայի փողոցներէն։ հետեւաբար երբ յուղարկաւորութիւնն սկսաւ յառաջանալ, ոստիկանապետն յիշեցուց կառավարչան հրամանը, սակայն ժողովուրդն, որ ծայրայեղ զայրացման մէջ կը գտնուէր, առ ոչինչ համարելով կառավարական հրամանն, սկսաւ ծանր քարերով շարունակել իւր գնացքը։ Քիչ յետոյ ոստիկանութիւնը վերստին կ'արգիլէ յուղարկաւորութիւնն, ազդարարելով շեղել ընթացքն։ Համարն ժողովուրդն որ գերգռուած էր արդէն իւր անմահ հայրենասէրի սպանման պատճառաւ, աւելի ևս սկսաւ յուզուիլ։ խուլ մռընչիւնները կը լսուէին, խիստ բառերը կ'ուղղուէին ընդդէմ կառավարութեան և իշխան Դոնդուկովի։ Բոլորի արիւնը գլուխն էր զարկած, այնպէս որ շատեր ձեռքը սուրերուն տարած պատրաստ էին յարձակուիլ ոստիկանութեան վրայ։ և այս յուզմանց պահուն հանգուցեալի որդին յառաջանալով կը դոչէ։ «Ընէք իշխանին, որ եթէ չարունակէ արգիլել դագաղը պիտի թողունք փողոցի մէջտեղ»։ սակայն կատաղի ամբոխը մէկդի վանելով զոստիկանութիւնն սկսաւ չարունակել իւր ընթացքը, փառաւոր հանդիսիւ մտնելով Գալանվնսկի մեծ փողոցն՝ որ մի ծայրէն մինչեւ միւսը ծածկուած էր էր մարդկային անհամար գլուխներով։ Դոնդուկով իշխանի պալատի մօտ դագաղը կեցնելով մաղթանքներ կատարուեցան։ Այստեղ ոստիկանապետը դարձեալ կը հրամայէր, կ'սպառնար յուղարկաւորութիւնը չանցուն պալատի առաջէն, այլ մոլեգնի ժողովուրդն որը աչերէն կրակ ու բոց կը ցայտէին, ամեն վտանգ յանձն առած անցաւ կառավարչապետութեան պալատի առաջէն, վրիժու և արհամարհանց հայեացքներ ուղղելով դէպի ան։ Ս. Դաւիթ բարձրադիր վանքի մօտ վրացի ժողովուրդը լալով հրաժարեցաւ իւր մեծ հայրենասէրի անչուշտ դիակէն։

Ռուսաց չատ լրագիրներ խօսելով Կիպիանիի սպանութեան վրայ, խորին համակրութեամբ կը վերաբերէին դէպ ի նա և կը գրէին։ «Այո, դառն, խիստ դառն է Կիպիանիի կորուստն, որովհետեւ նորա նման ազնիւ և անձնուէր գործիչ շատ հազուագիւտ է մեր շահագիտական դարու մէջ»։ Եւ ահա յուզարկաւորութեան առթիւ ևս ինչպէս կը խորհրդածէ Ռ---ԿԻ Կ---ՐԷՐ։ «... Կիպիանիի սպանութիւնն ի՞նչ նպատակաւ և կատարուած լինի, բոլորովին անարդարանալի է յաչս մեր։ Մեր մարդկային համարն զգացումները գառնացած են ընդդէմ այդ չարագործութեան և մինչև մեր սրտի խորն զայրոյթ կ'զգանք դէպ այդ նողկալի արարքը։ Սարսուռ կը պատէ մարմնոյդ, անդամներդ կը սառին, երեւակայութիւնդ կը մռայլի երբ աչքիդ առաջ կը բերես այն չարաչուք վայրկեանն, յորում արիւնարբու, անգութ և անօրէն հրէշն իւր մեղապարտ ձեռքը բարձրացուց 73ամեայ քնացած ծերունւոյն վրայ։ արդեօք չգոդացի՞ն նորա ձեռներն, արդեօք առանց մրցմա՞ն կատարեց այդ եղեռն, որով նման անմիտ երոստարտին նշաւակելի անմահութեամբ անմահացուց զինքն յաչս ապագայ սերնդեան։ Մեծ է այս բաղատանջ ծերունին։ դեռ մահուան առջեւ օրը պատրաստականութիւն կը յայտնէր ծառայելու հանրութեան և ազգին։ Մարդուս աչքերն արտասուք կը լեցուին և սիրտը զայրոյթով կը պատուի երբ կը մտաբերէ չարագործի կարծրասրտութիւնն, սպանելով այնպիսի մարդ մ'որ ամբողջ կէս դար ազնուութեամբ և բարեխղճութեամբ կարեւոր դեր կատարած է համայն Կաւկասեայ հանրային կենաց մէջ»։ Օտար լրագրի մը այս տեսութենէն կարելի է գուշակել թէ հապա ո՞րչափ մեծ արժէք կարող է ունենալ այդ անձն իւր ազգակիցներուն մէջ։

Ռուսաց յարատեւ ճնշմանց ազդեցութենէն, վերջին տասնեակ տարիներու մէջ վրացի ժողովրդեան զարգացեալ դասի մի մասն սկսաւ հոգ տանիլ իւր ազգային գոյութեան՝ ընդդէմ Ռուսիոյ ձուլիչ քաղաքականութեան։ Երիտասարդութիւնն սկսաւ հետաքրքրիլ իւր ազգային հնութիւններով, որ տակաւ առ տակաւ կանհետանային։ Կաւկասեան կառավարութիւնը, բոլորովին չնչելով Վրաց եկեղեցւոյ ազգային առանձնայատկութիւնը, ռուսացնելով նոցա վարժարանները, անեղոդամիտ կը դանուէր և ամենաչնչին կէտերու մէջ, այսպէս մի քանի տարի առաջ Վրացիք թոլտուութիւն խնդրեցին կառավարութենէն իրենց ազգային եկեղեցւոյ սրբոց պատկերներն հանելու և մերժողական պատասխան ստացան։ Այս և այսպիսի բազմաթիւ պատճառաւ վրացի ժողովրդի մի դասը սաստկապէս դառնացած է ընդդէմ Ռուսիոյ և այժմ կը չանայ ազգային գիտակցութիւնն հզօրապէս ծաւալել ժողովրդեան մէջ։ ազատութեան դրօշի պարագլուխներէն մին կը համարուէր այդ 73ամեայ աքսորական ծերունին, որ սպանումը Վրացիք կը վերագրէն ռուս կառավարութեան։ գուցէ սխալ լինի այս ենթադրութիւն, սակայն և այնպէս ժողովուրդն հաւատի լինելով իւր այդ կարծեաց, համակուած է սաստիկ զայրացումով։

Պ. Տ.

Ա Զ Դ

Հասարակութիւնը գոհութեամբ պիտի իմանայ թէ Պ. ՏԻՄԷԴՐԻՈՍ ԲԱԲԱԿԷՈՐԿԻՈՒ, որ հինգ տարի շարունակ այնքան սքանչելապէս վարած է Վենետիկ փողոցի կեդրոնական գրքէլքարանը, նոր հաստատութիւն մը բացած է Բերայի մեծ փողոցին մէջ որ կը կոչուի Նոյնպէս

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳԱՐԵԶՐԱՏՈՒՆ

Պ. Տ. Բաբակէօրկիու, իւր վայելած վստահութենէն քաջալերեալ, ծանր գոհոգութեանց տակ մնած է՝ կարելի եղած փայն և շուքը տալու համար իւր հաստատութեան. Պ. Բրոքչի գերմանական հին գարեջրատան տեղւոյն վրայ կառուցեալ Կեդրոնական Գարեջրատունը կը բաղկանայ գեղանայարկ մը և երկու յարկէ։ Ներս մտած ատենդ կայ ընդարձակ սրահ մը, պարտէզ մը և ճաշարան մը։ Առաջին յարկը կը բաժնուի բազմաթիւ չքեղ սրահներու։ Երկրորդ յարկը փոխարկուած է Բերայի Մեծ փողոցին վերայ նայող գեղեցիկ դարասանի մը։ Այս հիանալի հաստատութիւն անշուշտ ժամադրավայր պիտի լինի գեղեցիկ և հանգիստը սիրող անձանց։ Այցելողը պիտի համոզուի կարատեաց վայելչութեան, սպասաւորաց քաղաքավարութեան վրայ՝ որք քանի մը լեզուներ կը խօսին, ինչպէս կերարոց ըմպելեաց ընտիր տեսակին վրայ։

Ցերեկուան և գիշերուան ամեն ժամուն ամեն տեսակ ճաշ, ֆրանսական, գերմանական կամ հունգարական երգնակաւ։ ամեն տեսակ ըմպելիք, ամեն տեսակ աղանդեր։ Բաց աստի ընթերցարան մը կայ մայրաքաղաքիս և Եւրոպոյ գլխաւոր լրագրերով։

1327 4—18

ՏՕԳԹԷՕՈՒ ՏԻԿԻՆ ՊԱՍԵԱՆ

Մանկարարձ Տէօքթէօ Տիկին Պասեան որ երկար տարիներէ ի վեր ըրած փորձերովը, կատարելագործած է մանկարարձութեան արուեստը, կը դանուի ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը միջօրէէն յետոյ, ի Պոլիս կամուրջին գլուխը վ. Ծանոնի գեղարանը, ի Մահմուտ Փաշա Գ. Գարամանեանի գեղարանը, ի Կէտիկ Փաշա Կեդրոնական գեղարանն և Սկիւտարի իւր տուն, Ս. Խաչ եկեղեցւոյ փողոց թիւ 3։

ՏՕԳԹԷՕՈՒ ՊԱՍԵԱՆ

Տէօքթէօ Պասեան մանկարարձութեան արուեստին և կանանց ու աղջոյց վերաբերեալ հիւանդութեանց իրրև մասնագէտ իւր ուսումը կատարելագործած է Վիէննա, ի Բարլիզ և ի Լոնտոն 18 տարուան փորձառութեամբ։

Տէօքթէօ Պասեան ձրիաբար կը դարմանէ աղքատներն իւր տան մէջ Սկիւտար Ս. Խաչ Եկեղեցւոյ փողոց թիւ 3. ամեն ուրբաթ եւ կիրակի օրերը միջօրէէն մինչեւ իրիկուն։

Ի դիւրութիւն իւր յանախորդաց ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և շաբաթ օրերն պիտի գտնուի ի Պոլիս կամուրջի գլուխն վ. Ծանոնի գեղարանը, ի Մահմուտ Փաշա Գ. Գարամանեան գեղարանն եւ ի Կէտիկ Փաշա Կեդրոնական գեղարանն։

1323 7—30

Ա Զ Դ

Խափանեալ Մամու զաւեշտաթերթի արտօնատէր Գէորգ Եֆէնտի Այվազեան՝ Միտիլլիէն ընտիր ձիթաւիղ և օճառ, թէնոտոսէն պատուական գինի և Իզմիրէն ընտիր օղի բերել տուած է, և ժան գնով կը վաճառէ Ղալաթիա Բէնչէնիկ բաղար, Իսիսի խան։

Մինչեւ ցարդ Այվազեան էֆէնտիի յիշեալ վաճառատունը գիմոզը յոյժ գոհ եղած են ապրանաց ընտիր տեսակէն և գնոց չափաւորութենէն։

Այս օրերս լաւագոյն ապրանքներ հասած են։ 1318 7—15

THE WESTERN INSURANCE COMPANY LIMITED

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Ընդդէմ փոխադրութեան վտանգաց

Արեւելից համար ներկայացուցիչ

ԳՈՂԹՄԱ ՏԷՄԻԴՐԻԱԴԻՍ ԵՒ ԸՆԿ.

Կ'ապահովագրուին շրջենառով, երկախառնով և առանձնառանառով զրկուած ապրանքներ։ Կ'ապահովագրուին նաև դրամ, գոհարեղէն, արծէթեղէն և այլն պարունակող ծարտներ որք յանձնուած են թղթատարական վարչութեանց կամ փոխադրութեան Ընկերութեանց։

Դրասենեակք՝ Ղալաթիա, Վլոխոտա փողոց, Էլչիի խան, թիւ 8, 9 և 10։

1331

Օ ԳԱՄԷԼԻԱ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԵԼՈՒԿՈՑ

194 — Պեռ-Փողոց Բերայի — 194

Որպէս զի Օ ԳԱՄԷԼԻԱ վաճառատունն չչիսթիսի ուրիշի մը հետ և հասարակութիւնն երբէք չսխալի, դրան վերեւ գրուած է արեւելեան ծաղիներէ հեր Գամելիա մը։

ՆՈՐ ՀԱՍԱԾ ԵՆ

ԶՄԵՌՆԱՑԻՆ ԵՂԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՐ ՆՈՐԵԼՈՒԿՆԵՐ, ԲՐԴԵՂՆԵՐ, ԹԱԻԻՇՆԵՐ, ՄԵՏԱՔՍԵՂԷՆԵՐ ԵՒ ԿԱՌՆԻԴԻՒ։

ՊԱՐԱՀԱՆԴԷՍԻ ԵՒ ԵՐԵԿՈՑԹԻ ՀԱՄԱՐ ԸՆՏԻՐ ԱՊՐԱՆՔՆԵՐ

ՄԻՄԻԱՑՆ ԱՄԵՆ ՀԻՆԴՇԱԲԹԻ

Այս օրէն սկսեալ, Մեծ ՎԱՃԱՌԱՀԱՆԴԷՍ ամեն տեսակ բրդեղէն, կտաւեղէն, մետաքսեղէն կերպասներու կտորներու։

ԿԷՍ ԳՆՈՎ

—

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՊԱՏՐԱՍՏ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՆՈՐԱՁԵՒՈՒԹԻՒՆՔ

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

1243 ՈՐՈՇ ԳԻՆ 21—36

ԱՄԵՆՈՒՐԵՔ ՀԱՐՅՈՒՆՑԷՔ

Ս. ԺՈՐԺԻ ՌՈՄԸ

ՃԱՇԱԿԵՑԷՔ ԵՒ ԲԱՂԴԱՏԵՑԷՔ

698

Ր

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԾ ՀՐԴԵՀԸ

Նոյեմբեր 25 ին (Ն. Տ.) ի Վիեննա Պ. Ճօն Գարլ Քանդլմայրի ճերմակեղինաց մեծ գործարանը բռնկեցաւ, հակառակ ջրհեղեղաց ջանքերուն երեք ժամուան մէջ մոխիր դարձաւ։ Միայն կանանց եւ արանց յատուկ 1650 երկոտասնեակ ճերմակեղէն ազատել կարելի եղաւ, որ չէնքին վերի յարկին մէջէ կը գտնուէր։ Այդ, նոյն գործարանի թշուառ գործարանաց օգնելու համար ազատուած ճերմակեղէններէն մէկ մասը մայրաքաղաքս զրկուած է եւ որոշուած է ժամ առաջ վաճառել խիստ ածան գնով։ Այս ապրանքներ կը գտնուին ի Պոլիս Վ. Արէն Հաւուց Ցիր Սօնարէի մեծարանցն ի Կիւմրկի Խան թիւ 5։ Կը յանձնարարուի արգոյ հատարկութեան գնել նոյն ապրանքներէն, որով թէ ամենաշնչին գնով ճերմակեղէններ պիտի ունենայ եւ թէ այսպէս օգնած պիտի լինի հրկիզեալ գործարանի թշուառ գործարանաց։

Ի ՎԱՃԱՌ ՀԱՆՈՒԱԾ ՃԵՐՄԱԿԵՂԷՆՔ



ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ

470 երկոտասնեակ շապիկ

Պատրաստ շապիկներ նուրբ տեսակէ անգլիական գպիրոց պատրաստուած կուզքը շրջն ծաքով, վզնոցով ու թեւնոցով։

Հատը 19 ղրշ։ Երկոտասանեակը 190

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Անգլիական նուրբ գպիրոց պատրաստուած եւ Զուիցերական ասլէնիներով զարդարուած պատրաստ շապիկներ։

Հատը 11 ղրշ եւ երկոտասանեակը 128 ղրշ։

Զուիցերական ասլէնիներով զարդարուն եւ անգլիական նուրբ գպիրոց պատրաստուած երկար ֆռֆռոններ հատը 16 ղրշ եւ երկոտասանեակը 190 ղրշ։

Աթլասով և թաւիշով զարդարուած շուխայէ ֆէ-ֆոններ հատը 25 ղրշ եւ աւելի։

Սէռլէնի բռնուած կանանց յատուկ գիշերային շապիկ հատը 25 ղրշ և աւելի։

Կանանց համար գեղեցկահիւս անդրավարտիքներ հատը 11 ղրշ. և աւելի։

Արանց համար բարակ կէս անդրավարտիքներ հատը 10 ղրշ և աւելի։

Կանանց համար ֆռֆռներ շապիկ, ձըմեռուան գուլպայ երկայն և կարճ, կոշիկ եւ այլն աւելի յարմար դներով.

Գաւառներէ եղած յանձնարարութիւնը կը կատարուին եթէ փոխարէքը զրկուի։

Դիմել Վարէն Հաւուց Ցիր Մօնարէի մեծարանցն ի Գալաթիա Մախմուսէի վարչութեան դէմ գերեվանական թղթատարաքան մօտ Կ՝ւմիշլէ խան թիւ 5։

1331 1—6

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԽՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.

Ընդարձակ առեւտուր պատատաց հետ

Զինէ եւ ձավայէ ուղղակի բերուցած

Գերբնտիր եւ ամեն ճաշակի յարմար թէյեր

ԳՆԵՐ ՁԱՓԱՒՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ

Փորձը ամեն գովելուտէ լաւագոյն պիտի հաստատէ հինգ տարիէ ի վեր սոյն վաճառատան ըրած զոհղութիւնքն յամախորդները գոհացնելու համար։

Պահանջ Գարու ճեղալ պէյ խանի դրան կից թիւ 10

1000 53—78

ՏՕՔԹՕՐ ԱՅԷՐԻ

ԶԷՐՐԻ ՓԷՔԹՕՐԱՆ

Տօքթօր Այէրի Զէրրի Փէքթորին արագապէս կը բուժէ հարբուղները, հազերը, կոկորդի վէրքը, փղացաւը, բորբոքումն հաւագի, բորբոքումն ընչափորձի, ընչարդելութիւն ևն։

Այս դեղը հրաշալի կերպիւ կը զօրացնէ տկար թոքերը, կը հանդարտեցնէ թոքային գրգռումները, և կասեցուցա հարի և յատացեալ թոքախտի համար մեկ դարմանն է, որ հզօրապէս կ՝ոփոփէ ու կը կպղուրէ։

Տր. Այէրի Զէրրի Փէքթորին այնքան մեծ հմտաւ ստացած է իբրեւ ամենէն հզօրագոյն դարմանն զոր գիտութիւնը ի այս ընծայեց, շնորհիւ նորա կոկորդի և թոքային տկարութեանց վերայ ունեցած ուժգին և միօրինակ նուաճող ազդեցութեան է, որով միանգամայն իւր առաքինութեանց ջատագովն և պաշտպանը կը հանդիսանայ։

Զայս ամենեւին դեղ մը որ կրնայ այնքան կարեւոր լինել հիւանդին քան զայս, և կամ աւելի արժանիք ունենայ նորա կատարեալ փոխանութիւնը դրաւելու։

Զէրրի Փէքթորին ընտանեկան գործածութեան համար եղած ուրիշ ամեն դեղերէ գերազանցն է և համեղ. քանց չատ հաճելի լինելով՝ փոքր տղայք չատ դիւրաւ կ՝առնուն։

Գործածութեան եղանակը չիշերուն հետ կը տրուի։ Կեդրոնատեղին է Ս. Մ. ՄԻՆԱՍԵԱՆ և ԸՆԿԵՐՈՑ Ամերիկեան վաճառատունն, ի Գալաթիա Կ. Պոլսոյ։ Կը ծախուի նաեւ քաղաքիս մէջ գտնուած դեղագործաց քով։ 581



ԳԱԴՐԱՄԻՆԱՅԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐ

Այս դեղը կը ներկայէ այս վերջին տարիներս բժշկութեան մէջ եղած մեծագոյն գիւտը։

Տօքթոր Ա. Պէրդելլի Նորվեկիոյ պարզ խայծդանէն հանած է մասնաւոր բաղադրութիւն մը, զոր Գադրամինա կոչած է։ Այս բաղադրութեամբ պատրաստուած դեղահատներն ապահովապէս կը բժշկեն քիչ ժամանակուան մէջ շնչափողի բոլոր հիւանդութիւնները, ինչպէս

ՀԱԶ, ԹՈՔԱՀԱՏԱԳ, ՊՐՈՆՇԻԹ, ԹՈՒՔՍՅԱՒ, ՀԱՐԲՈՒԽ, ՇՆՉԱՐԴԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻԱՅՆ ԽՈՒՐԱՆՍ։

Շատ դիւրաւ կը գործածուին եւ ախորժ համ մ՝ունին։ Տղաքներն անգամ դիւրաւ կը գործածեն զայնս և անոնց վրայ պատասխոր կերպով կը ներգործեն։ Մարսողութիւնը կը դիւրացնեն։ Բոլոր բժիշկք ջերմագէս կը յանձնարարեն զայնս եւ Կալէրէ դը Մէրքուրի, Ռըբէյլ Դեպէյրէ դը Ֆոսֆ, Կալէրէ Մեսքիալ դը Մէյլան, Ռըբէյրդ'Իէլլեն է Թէսաթիօրէ, Ժուռնալ Ինդէնտանթէտալ դը Մէրքուրի (Նորտրի) գովեստիւք խօսած են նոցա վրայ։

ԻՏԱԼԻՈՅ ԹՈՒՔԱՀԱՏԻՆԵՐ բժիշկ ՍԱԼԻՈՆԷ անդրպատելի դարման կը հռչակէ այս դեղահատներն եւ Բաղիոյի համալսարանէն Բ. ՈՖ. ԼՈՆԳԻ կ՝ըսէ թէ անժխտելի ապացուցութիւն մ՝ունին։

Գադրամինայի դեղահատները կը ծախուին 2.50 ֆրանքի եւ կը գտնուին իւրաքանչիւր օտար երկրաց ամեն լաւ դեղավաճառաց քով։

Ա. ՊԷՐԴԵԼԼԻ ԵՒ ԸՆԿ. տունն, դեղագործ—քիմիագէտ ի Միլան, այս դեղահատներու տէրը, իւր փոքր կը զրկէ չորս տուփ (որք բաւական են ամենէն ծանրը զէպքերուն մէջ) առանց թղթատարութեան ծախքի աշխարհիս չորս կողմն, եթէ կանխաւ ստանայ 9.50 ֆրանք։

Անոնց երկրի մէջ արտօնեալ են։

Պահանջել գործարանին վերոյդրեալ նշանն եւ ստորագրութիւնը։

Զուիցերիոյ համար միակ ներկայացուցիչն է Օգիւստ Ամեն ի Լոզան։
Հիւսիսային Ամերիկայի համար Գարլ Ֆ. Հոֆֆը եւ ընկ. ի Ֆիլատֆիա։
Կ ՊՈԼՍ Ց մէջ ներկայացուցիչն է ԺՈԶԵՖ ՊՈՐԿԻՆԵՆ, Եորդանճըքար փողոց, 69. Գալաթիա (վաճառատուն Դարոշլու)։ 1244

Առաջնակարգ դեղագործ ի Փարիզ, ասպետ Պատուոյ լեգէոնի, վարձատրեալ Բ. Կարգի Մէճիտիէով, ֆօնտաթէր Իզապէլ-լա-Գաթոլիք պատուանշանին։

ՃԵՐՄԱԿ ԵՒ ԹՈՒԽ

Մարիւ ձկան իւղը խայծդանով զտելով, Պ. Շեվրիէ այդ հեղուկին տուած է ախորժելի համ և հոտ, միանգամայն աւելցնելով անոր բուժիչ յատկութիւններն։

Այս դիւտին պատճառաւ հնարիչը մեծամեծ վարձատրութիւններ ստացած է, միտալ և պատուոյ վկայական։

Ամբողջ աշխարհիս բժիշկք կը նախադասեն զայն ամեն տեսակներէն։

ԵՐԿԱԹԱՒԱՌՆ

Պ Շեվրիէ իւր դիւտը կատարելագործած է իւրաքանչիւր ոք ֆէրով Մարիւ ձկան երկամսեան իւղ մը պատրաստելով։ Հակառակ այս յաւելման, իւղը դիւրաւ կը մարսուի և բնաւ ոնդութիւն չպատճառեր։ Ուստի նախընտրելի է միւս բոլոր երկամսեանն պատրաստութիւններէն և յոգոտութեամբ կը գործածուի Թոքախտի, Պրոնշիթի, Վատուութեան և Խոյլի համար։ Մատանդ կը յարմարի ամբարակամ անձանց։ 711

Ընդհ. մթերանոց, կեդրոն դեղերն. Ն. ԹԷՕՏՈՐԻՏԷՍ, 244, Մեծ փողոց Բերայի, Կ. Պոլիս
Միւնանդ դեղատան մէջ կը գտնուի նաեւ Շեվրիէի կազդուրիչ ԳՈԴԱՑԻ ԳԻՆԻ։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿ.
ԸՆԴԳԷՄ ՀՐԴԵՀԻ.

ՊՈԼՍՈՑ ԵՒ ԱՍԻՈՑ ՀԱՄԱՐ ՏՆՕՐԷՆ ԵՒ ԴՈՐԾԱԿԱԼ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳՈՒՐՄՈՒԶԻ
LA ROUENNAISE

1837 ԻՆ ՀԻՄՆՈՒԱԾ

Դրամագլուխ . . . . . 4,000,000 ֆրանք
Պահեստի դրամն հաշուոյն մէջ չէ

L'INDUSTRIELLE

Հրդեհի ճիւղէն 1,500,000 ֆր. Բուն իսկ դրամագլուխ 5,000,000 ֆր.

LA CAISSE D'ASSURANCES MUTUELLES

Կ՝ապահովագրուին նաեւ արջառք և անասուն։

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել Գալաթիա Գարանթիա փողոց Լէօն խան թիւ 1, 2, 3, 4։

Աղբիանուպոլսոյ և Արեւելեան Բուլգարիի տնօրէն և գործակալն
123 Գ. ՏԷԼԻԳԱՔՕՍ



ՍԻԿԱՐԼԷԹԻ ՃՇՄԱՐԻՏ ԾԽՈՂՆԵՐԸ Պարտին գործածել միմ՝այն 811

կամ բնաւ չծխել ԺԱՆ ՊԱՐՏՈՒ Ստորագրութիւն

այս նշանաւ միայն կը շինէ

ԱՊԱՀՈՎ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
ԶՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Ս. Գուլիտոնեան պար.—Լուսնոտութիւն—Արգանդախզղ—Լիւանդութիւնք ուղեղի և ողնածուծի ցնցագութիւնք, գլխու պտոյտք, ջղային տագնապք, շլացմունք, քնոտութիւն, ուղեղային բորբոքում, սերմնաթափութիւն

ՍԻՌՕ ՀԷՆՐԻ ՄԻԻՌ մինչոյաւ

Քիմիապէս մաքուր բոդասիոնիի պատրաստիւրով

15 տարուան ԱՊԱՀՈՎ ՑՈՋՈՂՈՒԹԻՒՆ Փարիզի Հիւանդանոցաց մէջ գործածութեամբ։
Շատ կարեւոր տեղեկութիւնք կը տրուին փափաքողաց ձրիաբար

Հէնրի Սիւռ, ի Բոն-Սէնդ-Էսբռի (Ֆրանսա)

Մեծաքանակ կը վաճառուի ի Դեղագործական Մթերանոցն, 35, Գալաթիոյ Մեծ փողոց, Կ. Պոլիս։
Փոքրաքանակ կը վաճառուի ամեն դեղարանաց մէջ։ 816

ԺԱՆ ԲՈԱԼԴԻ.— ՄԵԾ ԴՈՐԾԱՐԱՆ ԿԱՀԱՒԱՍԵԱՑ, Նոր բացուած Բերայի Մեծ փողոցը, 127, և ի Գուլէ-Գարու, Կալաթիայի աղաբակին դիմաց և Եաղլըճը փողոցին քով, թիւ 657.— ՄԵԾ ՄԸԹԵԱՆՑ ԿԱՀԱՒԱՍԵԱՑ, Նոյն փողոց թիւ 657, 659, 661, 663.— Ամեն տեսակ ԿԱՐԱՍԻՆԵՐ.— ՇՐՔԵԼԱԿԵՐՏ ԿԱՐԱՍԻՆԵՐ, ամեն ճոխութեամբ և կատարելութեամբ.— Ամեն տեսակ ԿԵՐՊԱՍՆԵՐ.— Որսորդներու համար ամեն տեսակ օթոցներ, գանգուէներ, թիկնամոռներ, սթոռներ.— Ամեն տեսակ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ և հազար տեսակ ուրիշ կարարներ.— ՅԱՆԶՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ու կ՝ընդունուին, կարճ պայմանաժամի համար.— ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ, ՎԱՅԵԼԶՈՒԹԻՒՆ, ԱԺԱՆՈՒԹԻՒՆ։
Նոյն. Զէքթեթ Բուալդի Եղբարց վաճառատան հետ։ 661

ԱԶԴ ԱՄԵՆ ԱՆՈՆՑ ՈՐՈՑ ԷՈՒԹԻՒՆԸ ԽԱՆԳԱՐՈՒԱԾ Է ԶՂԱՅԻՆ ՏԿԱՐՈՒԹԵՆԷ

Եթէ տառապեալ մարդ կարենան ուշադրութիւնը կը հրաւիրեմ այսօր ջղային հիւանդութեանց դարմանման եղանակիս վրայ, կարելի է որ յանդգնութիւն մը նկատուի այս, քանի որ ամենքն գիտեն միմիայն չահագրական նպատակս։ սակայն եթէ նմ գրուռեանս վրայ ապահով ունիմ, ի հրապարակ չեմ հաներ։ Եթէ լրագրաց միջոցաւ յայտարարութեան միջոցին կը դիմեմ, պատճառն այն է որ մարդասիրական նիրհոյանալու համար ուրեք և ուրեք ազդեցիկ եղանակ չկայ։

Նախ խօսքն կ՝ուզեմ անոնց որք ԶՂԱՅԻՆ ԴԻՒՐԱԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ունին, գլխու ցաւ, մեծ զգայնութիւն, յուզում, քնատութիւն, ընդհանուր անհանգստութիւն։ Ցեղոյ անոնց որք ԻԶՈՒԱԾՔԻ ունեցած են եւ կը տառապին անդամալուծութենէ, խօսելու կամ կուլ տալու դժուարութենէ, յոգոտանոց կարկամութենէ, յիշողութեան պակասութենէ։ Անոնց որք ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆՈՒՄ մը կրած են, ամեն տեսակ միջոցներով։ Վերջապէս անոնց որք ԻԶՈՒԱԾՔԻ ԿԸ ՎԱԽՆԱՆ, եւ որք կանխաւ ունին յարատեւ անհանգստութիւն, գլխու ցաւ, շլացում, ականջի բզզիւն եւայլն։

Զղային հիւանդաց այս երեք դասակարգերուն, ինչպէս նաեւ բոլոր այն քաջառողջ եւ մինչեւ իսկ երիտասարդ անձանց որոց գլուխը չատ կ՝աշխատի, խորհուրդ կուտամ հետեւիլ իմ գործածածս մեթոտին որ չատ դիւրաւ կը գործածուի եւ չատ ածան (օրը հապիւ 10 սանթիմ)։—Այս նպատակաւ կը յանձնարարեմ իմ տեսակիս (Ֆրանսերէն, յունարէն, թուրքերէն եւ գերմաներէն) տառերեքերորդ տպագրութիւնն

ԶՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԻԶՈՒԱԾՔԻ ՎՐԱՑ

ՆԱԽՍՕՐԴՈՒՇՈՅՈՒՄ ԵՒ ԴԱՐՄԱՆՈՒՄ

որ ձրիապէս եւ առանց թղթատարական ծախքի կը դրկուի երբ թղթատարի Վ. ԷԼԼԻԳՍ գերմանական դեղարանէն, Իւքսէք-Գալաթրրմ, 68, Կ. Պոլիս։—Տր. Շոմանկի եւ ընկ., դեղագործ յիտիրնէ. Գ. Օլիմբիոս, դեղագործ յԱթէնք. Ֆրէտերիք Ռոհաքի, Գորֆու. Ն. Ճ. Սգանոքի, Սոֆիա, եւ Ժան Տիլպէր, դեղագործ ի Պէլգրատ։

Թէեւ իմ տեսակիս մէջ նկարագրեալ գարմանման եղանակն բազմաթիւ նպատաւոր յօգուտներով ընդունած է մասնաւոր Քրոս Զայդոնի (թիւ 145 յունիս 25), Գոռնէ դը Պոռ Պէրլինի (թիւ 238, մայիս 24ի), Գոռնէ դը Պէրլին (թիւ 140 մայիս 24), Բոռդ, Նորտ Տայչ Ալլ. Զայդունի, Հաուսբրանֆէն յայդունի Վիէննայի, Ժուռնալ Ինտէնտանթէլէ Գոռնալալ Վիէննայի, եւայլն, կրնամ նաեւ յաւելլ երեւելի անձանց վկայութիւններ, ինչպէս Օլմբնայսրկի դուքսն (գրեակ Էռլաի), ընդհանուր տեղական Պրէտոլ (Պրիվէն), հազարապետ Պատոն Ֆրան (Տարտրդատ), կոմսուհի Սէհէր-Թոս (Հոհէնֆրիտէպերկ), Վոկդ, գատաւոր (Սէլէրիկէն), Օտէրկէ յնէ, ուսուցիչ (Ֆրէօրս), Պատոնուհի Վիլլանի (Ֆրանքֆորդ-սիւռ-Մայն), բազմաթիւ ուրիշ երեւելի անձեր, որ ց անուանները թուել երկար կ՝ըլլայ, և դեռ ուրիշ բ-ժշկ-ական գ-ր-ա-գ-ր-ի-ա-ն-ներ այն թէպէտ ուրեմնց վրայ, զորս մեզ բերան են բազմաթիւ բժիշկներ, որոց բոլոր նամակները վաւերական են։

Այս տեսակ վկայութիւններ ի մեզ ունի, պարզ կը համարիմ ամեն տեսակ ծանուցումի ընել՝ ծառայելու համար տառապեալ մարդկութեան։ Ապացուցանելու համար ընթերցողին՝ ոչ միայն ընդհանուր հիւանդութիւնը, այլ եւ բուժման եղանակին բազդատելով գործածութիւնը, իմ տեսարանս կցած եմ բժշկաց և մասնաւորաց 150 տեղեկագրեր։ Այս տողերը կարդացող բժշկաց և գիտնոց հմտոյ, մասնաւորապէս կը գիտեմ բժշկական մի հեղինակութեան, ԲՐՈՖ ՉՈՈՐ Վ.ԻՐԽՈՎԻ ի Պերլին որ ըսած է. Ազդեցիկ գրգռիչ դեղի մը անհայտ մասը կրնայ շատ մեծ եւ տեւական ազդեցութիւններ յառաջ բերել, բան որում ջղերուն նախնական գրգռումը կը տարածուի։ եւ ՏՐ. ԼԻՊԻԿ կ՝ըսէ. Ամեն անոնք որք փորձեր ըրած և գրաղած են բ-ռ-ռ-ի-ա-ն ե-ր-ե-ռ-ի-ց խ-ա-զ-ի-ս-ի-ն, համաձայն են մէկ կէտի մը վրայ, այն է թէ սոքա յառաջ կուգան մեր կարծածէն և խորհածէն շատ աւելի պարզ պատճառներէ, և ճիշդ այդ պարզութիւնը պարտինք նկատել մեծագոյն սքանչելիքը։

Վ.ԻԼՈՍԷԼԼԷՆ (Պաղեստրա). յունվար 1887

ԱՐՄԱՆ ՎԷՅՍՄԱՆ, Նուիրեալ Բժշկի
Պատուական անդամ իտալական Սպիտակ-Խաչի առողջապահիկ ընկերութեան
Ընդհանուր Մթերանոց Վէյսմանի Ջիրին, Գերմանական դեղարան, Վէրիյա եւ Ընկ.
Եիւքսէք-Գալաթրրմ, Գալաթիա, Կ. Պոլիս 1236

ՖՐԱՆՔՕ-ՀՕՆԿՐՈՒԱԶ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԻՊԻԻՏԱՐԷՍԹ
ՀԱՆԴԵՐՁ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՄԲ

Արտօնեալ դրամագլուխ	20,000,000
Գանձեալ »	10,000,000
Մահուան արկածից դէմ պահեստի	12,000,000

Արեւելից Տնօրէն. Մ. Լօժէն Բարարօր
» վերաբերեալ գործակալ և քննիչ. Մ Նազարէթ Եաղճեան
ԹՈՒՐՔԻՈՑ ԳԼԽԱՒՈՐ ԲԱՂԱՔԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Տեարք Պալեօղեան և Պալըքճեան Կմիւռնիա. Տարեանեան և Գասպարեան Ատանա. Գ. և Ս. Սեթեան Հալէպ. Բ. Շերէֆֆէտտին և Տէրունեան Ատալիա և Սպարթա. Սիմէօն Տէլիրմէնճի օղլու Քօնիա, եւն եւն։

Ֆրանքօ-Հունգարական կենաց անուանուն ընկերութիւնը խիստ դիւրատուչելի պայմաններով մահուան դէմ ապահովութիւններ կ՝ընդունի, նոյնպէս փոքր աղայոց և աղջկանց ի չափահասութեան վճարելի պայմանաւ։

Աւելորդ կը համարիմք ըսել թէ ամէն ընտանեաց և զաւակաց տէր անձանց իրր նուիրական պարտականութիւն մ՝է տարեկան փոքրիկ զոհղութեամբ մը իւր կեանքն և իւր զաւակաց ապագան ապահովել. կամ ի ծերութեան օրերու և կամ յետ մահու իւր ուրեմն կրնայ ապահովել։ Կամ ի ծերութեան օրերու և կամ յետ մահու իւր ուրեմն կրնայ ապահովել։

Ասոնք ամենայն ինչ ունին ի ձեռին, պարզ կը համարիմ ամեն տեսակ ծանուցում ընել՝ ծառայելու համար տառապեալ մարդկութեան։ Ապացուցանելու համար ընթերցողին՝ ոչ միայն ընդհանուր հիւանդութեանց դասակարգութիւնը, այլ եւ բուժման եղանակին բազդատելով գործածութիւնը, իմ տեսարանս կցած եմ բժշկաց և մասնաւորաց 150 տեղեկագրեր։ Այս տողերը կարդացող բժշկաց և գիտնոց հմտոյ, մասնաւորապէս կը գիտեմ բժշկական մի հեղինակութեան, ԲՐՈՖ ՉՈՈՐ Վ.ԻՐԽՈՎԻ ի Պերլին որ ըսած է. Ազդեցիկ գրգռիչ դեղի մը անհայտ մասը կրնայ շատ մեծ եւ տեւական ազդեցութիւններ յառաջ բերել, բան որում ջղերուն նախնական գրգռումը կը տարածուի։ եւ ՏՐ. ԼԻՊԻԿ կ՝ըսէ. Ամեն անոնք որք փորձեր ըրած և գրաղած են բ-ռ-ռ-ի-ա-ն ե-ր-ե-ռ-ի-ց խ-ա-զ-ի-ս-ի-ն, համաձայն են մէկ կէտի մը վրայ, այն է թէ սոքա յառաջ կուգան մեր կարծածէն և խորհածէն շատ աւելի պարզ պատճառներէ, և ճիշդ այդ պարզութիւնը պարտինք նկատել մեծագոյն սքանչելիքը։

Գ. ՀԻԼՑ ԵՒ ՈՒՅՈ
Գործակալ
Թիւ 17–18, Քիւչիւք Միւլք
881 Կամ Գալաթիա

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ
ԸՆԴ ԴԼ ՌՏԼԷՆ, Կ. Պոլսոյ Լ Օրէսի
ԹՈՎՄԱՍ ՈՒԻԼՍՕՆ
ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալզպոս	2,900	Լէքանդ.	4,500
Անդէլ.	3,000	Մարկնկ	4.300
Ակկ	1,300	Մարսայթ	2,500
Գասասս.	3,500	Մէլբ	2,000
Գլասգոս	3,200	Նէտր	2,000
Գլամ	2,000	Պէնէլ.	5,000
Դէլբ	2,600	Ոչնասս	3,000
Գրանբա	2,500	Ոգլանդ.	4,500
Գասմ.	2,700	Ոդգ	2,000
Գասգ.	2,000	Սաութ Ֆրէնք	1,200
Գոսմ	2,700	Բրայբրմ	3,200
Ֆիսս	2,500	Բասգեր	1,700
Ֆոմիս.	1,800	Գէնգ	2,800
Ֆրաս	2,600	Ֆիլատ.	1,400
Ֆրանգ	2,600	Ֆիռանս	3,200
Ֆոլգոն	800	Ռալբ	3,000
Ֆնոս	1,700	Ռոմանս	5,500
Ֆլամինգ	1,600	Ռոմեր	3,500
Կոպենհ	5,500	Սալիսբ.	4,000
Կիգանս	2,200	Սաքսն	2,000
Կոզբ	1,800	Սիլիս	2,000
Կրոսս	2,200	Սերենգ.	4,300
Հանգ		Տասս	1,200
Հէրս	3,900	Տ. Ռիչրդ	2,500
Հիսպան.	3,000	Թիլեր	4,300
Հիսմիրդ	1,200	Թոլեռս	2,800
Ճոս	2,300	Քասնդ	2,500
Ջերս	2,900	Ցեռսս	1600
Ջոնս	2,200	Ջեզրա	3,000
Լեռ	2,000	Ջերս	4,0

Մասնիս չոգենաւը, նաւապետ Ճոնսըն, ընդհանուր վաճառքով Հըլլէն ասա հասած է։

Քանս չոգենաւն, նաւապետ Նիլ, ընդհանուր վաճառքով Հըլլէն մեկնած է անցեալ 12ին և 28ին ասա կ՝սպասուի։

Կրմոս չոգենաւը, ընդհանուր վաճառքով ապրիլ կը բեռնաւորի ի Հըլ։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւնքներ։

Աւելի մանրամասնութեանց համար դիմել ասա
Ֆ. ՀԻԼՑ ԵՒ ՈՒՅՈ
Գործակալ
Թիւ 17–18, Քիւչիւք Միւլք
881 Կամ Գալաթիա

ՇԻՐՔԻԹԻ ԽԱՅՐԻՅԻ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՑՑ 664
1887 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐ 31

Վոսփորէն Էլլնոյ ընթացքներ

2 30 Եէնիմ. Մեզ. Պէյիւք. Թար. Եէնիք. Մթէն. Պոյաճ. Ր. Հիսար Պէկէք Արնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիքթաշ
2 15 Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիք.
2 30 Վանիք. Զէնկէյ. Պէյլեր. Գուզկ. Գապաթ.
2 30 Պէյդ. Բաշպա. Զուպ. Գանլըճ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Զէնկէյ. Պէյ. Գուզ.
2 45 Գավագներ Մեզարպ. Պէյիւք. Թար. Պէյդ. Բաշպա. Զուպուգլը Գանդը. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Զէնկէյլը. Պէյլեր. Գուզկ. Իսկիւսար
3 15 Եէնիմ. Մեզարպ. Պէյ. Թար. Եէնիք. Մերկ. Ր. Հիսար Պէկէք Արնավ. Գուր. Օրթ. Պէշ.
4 15 Պէյիւք. Թարպ. Պէյդօղ. Բաշպա. Զուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Պէշիք,
4 45 Եէնիմ. Մեզարպ. Պէյիւք. Թարպ. Եէնիք. Մթէն. Պոյաճ. Ր. Հիսար Պէկէք Արնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիքթաշ
6 15 Եէնիմ. Մեզ. Պէյիւք. Թար. Եէնիք. Մթէն. Մերկ. Պոյաճ. Ր. Հիսար Պէկէք Արնավ. Գուր. Օրթ. Պէշիք.
7 — Եէնիմ. Մեզարպ, Պէյիւք. Թարպ. Պէյդ. Բաշպա. Եէնիք. Մերկ. Գանլըճ. Ր. Ա. Հիսար Գանտիլ. Արնավ. Զէնկէլ. Պէյլ. Օրթ. Գուզկ. Պէշիք. Իսկ.
7 45 Ա. Գավ. Եէնիմ. Մեզարպ. Պէյիւքարէրէ Թարպա. Եէնիք. Մթէն. Մերկ. Ր. Հիսար Պէկէք Արնավ. Գուրուչ. Օրթա. Պէշիք.
8 45 Պէյ. Թար. Պէյդօղ Բաշպա. Զուպուգլը Գանդ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. Իսկ.
9 — Եէնիմ. Մեզ. Պէյ. Թար. Եէնիք. Մթէնիա Պոյաճ. Ր. Հիսար Պէկէք Արնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիք.
10 — Եէնիմ. Մեզարպ. Պէյիւք. Թարպա. Եէնիք. Մերկ. Ր. Հիսար Պէկէք Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիք.

Կամարջէն դէպի ընթացքներ

3 5 Պէշիք. Օրթ. Գուր. Արնավ. Պէկէք Ր. Հիսար Մերկ. Եէնիք. Թարպ. Պէյիւք. Մեզպ. Եէնիմ.
4 15 Գապաթ. Իսկ. Պէշիք. Գուզկ. Օրթ. Պէյ. Զէնկէյլ. Արնավ. Գանտ. Ա. Ա Ր. Հիսա. Գանլըճ. Մերկ. Եէնիք. Բաշպա. Պէյդ. Թարպա. Պէյիւք. Մեզարպ. Եէնիմ.
4 15 Իսկ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլը. Զուպ. Բաշպ. Պէյդօղ Թարպ. Պէյիւքարէրէ Մեզպ. Եէնիմ.
4 30 Պէշիք. Օրթ. Գուր. Արնավ. Պէկէք Ր. Հիսար Պոյաճ. Մթէն. Եէնիք. Թար. Պէպիւք. Մեզ. Եէնիմհաղլէ.
5 35 Գապ. Պէշիք. Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պէկէք Ր. Հիսար Մերկ. Եէնիք. Պէյդ. Թարպա. Պէյ. Մեզարպ. Եէնիմ. Ր. և Ա. Գավագ.
6 45 Իսկ. Պէշիք. Գուզկ. Օրթ. Պէյլեր. Զէնկէլ. Արնավ. Գանտ. Ա. և Ր. Հիսր. Գանլճ. Մերկ. Եէնիք. Թարպա. Պէյիւք.
8 15 Պէշիք. Օրթ. Գուր. Արնավ. Պէկէք Ր. Հիսար Մերկ. Եէն. Թար. Պէյ. Մեզ. Եէնիմ.
9 30 Պէշիք. Օրթ. Գուր. Արնավ. Պէկէք Ր. Հիսար Մերկ. Եէնիք. Թար. Պէյ. Մեզ. Եէնիմ.
10 — Գապ. Գուզկ. Պէյլեր. Զէնկ. Վան. Գանտ. Ա. Հիսար Գանլըճ. Զուպուգլը Բաշպա. Պէյդ. Թար. Մեզ. Ր. և Ա. Գ